



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

378

40fe00benf

HYGIÈNE & EDUCATION

DE LA
PREMIERE ENFANCE



RÉDIGÉ PAR UNE COMMISSION DE LA SOCIÉTÉ
MM. R. BLACHE*, LADREIT DE LACHARRIÈRE O*,
MÉNIÈRE (D'ANGERS) ☉, rapporteurs.

EDITION ARMÉNIENNE

PAR LE D^r. D. S. PÉCHEDIMALDJI

378- 42

012
յՐ-041

1003
10337

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔԻ ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

194
14486

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

610 *ար* ԵԻ
140-76 **ՏԱԾՈՒՄՆ**

613.9 **ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ**
Ա-72



ԽՄԱԳՐԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՅԱՆՁՆԱՎՈՂՈՎԷՆ
ՏԵԱՐՔ Պ. ՊԼԱՇ * ԼԱՏՈՒՅ ՏԸ ԼԱՇԱՌԻՒՄԻ Ս. *
ՄԷՆԻԷՆՈ (ԱՆԺԷԷ) տեղեկաբեքք

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԻ ԲԻՐԵՃԵԱՆ
ԻԵՐԱ ՇԷՆԼԻ ՓՈՂՈՑ ԹԻՒ Յ
= 1880 =



(16215)

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱԾՈՒՄՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

ՄՐՅԱՆԲ ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Գաղղիական Առողջարանական Ընկերութիւնն, 1878 մարտ ամսոյ մէջ մրցանքի դրաւ առաջին մանկութեան առողջապահութեան եւ տածման կարեւոր խնդիրն :

Այս նպատակաւ յանձնաժողով մը կազմեց, ընդ առնապետութեամբ Տօքթէօն Մութառ-Մառթէնի (բըժըշկական Ակադէմիայէն) եւ որու անդամք էին Տեարք Պաքըրի, Պլաշ, Տալ Բիազ, Տօմէն, Տիւրուրի, Տիւսըրի, Է. Թիպէն, Ռ. Բ. Հուլէղ, Լատոէ սը Լաշառիէն, Լանտիւն, Լը Քուան, Լիւիս, Մաթէի, Մէնիէն (Անժէէ), Մօռօ, Բասան, Տը Բիէթոս Սանթա, Ռ. Բէռէն, Հ. Ռօժէ, Վէնիէ (Վիլլէնէ) : Այս յանձնաժողովը մրցանքի յուղարկուած 53 յիշատակագրերը քննելէ յետոյ, ՏԱՍՆ 'ի նոցանէ վարձատրեց, իբր յայտագրին ամենէն լաւ համապատասխանողք :

Յետոյ այս նշանաւոր յիշատակագիրերուն մէջ պարունակուած ընտիր նիւթերէն օգուտ քաղելով, Ռ. Պլաշ, Լատոէ սը Լաշառիէն եւ Մէնիէն (Անժէէ) Տեարք յանձնեց ներկայ սրակիս խմբագրութեան հոգն, եւ այսպէսով եղաւ այս Գաղղիական Առողջարանական Ընկերութեան մի գործն :




Ահաւաստիկ ՄՐՅԱՆԱԿ ստացող անձանց անուններն
(օգոստոս 1878)

- Մէրաւ Կիւղէն - Տ. Ժ. Աննէն (Պրէսթէ) :
- Ա. Մէրաւ Կրժմէայ - Տ. Սաֆոէ (Բարիդէ) :
- Բ. Մէրաւ Կրժմէայ - Տ. Ա. Պ. Վիյնօ (Պաղատէ) :
- Գ. Մէրաւ Կրժմէայ - Տ. Միւլլէն (Ալթբրիքէ) :

Մէրաւ Կրժմէայ (հասարակարգ) :

- Տ. Տամաղ Քլօէղ ('ի Սէքլէն , Նօն նահանգէ) :
- Տ. Ա. Տառտէնն ('ի Լաքարէլ-Մառիվալ , Լօ նահանգէ) :
- Տ. Ժ. Է. Տոօմէն (Բարիդէ) :
- Տ. Կօալէսքի ('ի Նէօյի , Սէն նահանգէ) :
- Պ. Հիւսօն , դեղագործ 'ի Թուլ (Մէօնթ-Էլ-Մօղէլ նահ.) :
- Տ. Ժ. Մաղ ('ի Հալր , Ստորին-Սէն նահանգէ) :



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գրքոյիս այս յանձնարարարութեան կարօտութիւն չունի :

Մանկանց առողջապահութիւնն և տածումն , ազգաց կենսական խնդիրներէն մին է , այս ժամուս մանաւանդ որ , ամեն ուրեք , մարդասէր անձինք , Ժողովրդոց ոմանց օր քան զօր զգալի նուազումն իւրեանց զբաղանք ընելով , նորա պատճառները կը հետազօտեն անդուլ և դարմաններ կ'առաջարկեն :

Այս պատճառներէն մին , և ոչ փոքրագոյնն է , մանկատածութեան եղանակին թերութիւններն և ծնողական անխոնջ և իրական հսկողութեան պակասութիւնն :

Չունի առայժմ մեր ազգն արեւմտեանց այն ընկերական վիճակն , որ կը ստիպէ մերթ զմերթ յանձնել իւրեանց նորածին մանկունքն վարձկանաց ձեռք , հեռի ամեն դորովալից հոգածութենէ : Եւրոպիոյ մեծ կեդրոններու մէջ ծնողաց այս վարմունքը մասամբ իւրիք հարկադրական է թէպէտ , բայց ո՛չ երբէք արդարանալի :

Մերազնեայց թիւն եւս աներկբայաբար երթալով կը նուազի սակայն : Վիճակագրութեանց

չգոյութենէն չեմք կորող ճշգիւ հաստատել թէ ի՞նչ համեմատութեամբ է այդ նուազումն : Սոցա տխրալից պատճառներուն գլխաւորապէս գոյններն առողջաբանին շրջանէն դուրս են և սոցա բարձումը կարի դժուարին : Բայց առողջաբանը պարտ անձին ունի ուսուցանել մէկ ազգի , թէ առաջին մանկութեան մէջ սոսկալի համեմատութեամբ պատահած մահն , յորմէ մեր ազգին մանկտին եւս զերծ չէ , հնար է կարի իմն պակեցունել , եթէ ամեն ոք քաջ հըմուտ լինի այն անժխտելի օրինաց , որոց համեմատ պէտք է պահէ իր դեռածին մանուկն :

Այս գիտաւորութեամբ ներկայ գրքոյկս կը հրատարակեմք թարգմանութեամբ , գլխաւորապէս յօգուտ քաղաքաց բնակիչներուն , ուր առաւել քան այլուր , տղայոց վատաւոյլ լինելուն կամ առաջին մանկութիւննին մեծ մասամբ չը կարենալ աւարտելուն , բազմատեսակ պատճառներ կան և որոց միոյն վրայ կը խօսի ներկայ աշխատութիւնս :

Յաւ է մեզ տեսնել աստ , որ ծնողք , որ ընկերական աստիճանին որ պատկանին , տղայք խնամելու մասին իւրեանց առաջնորդ ունին անիմաստ աւանդութիւններ , այլանդակ նախապաշարումներ , և իբր խորհրդական , ամենափոքր բացառութեամբք , դաս մը տգէտ , շահասէր , անխիղճ և լիտի կանայք , մանկաբարձ յորջորջանքով , որք երկրիս պատուհասներէն մին են , ուրիշ ոչ սակաւ պատուհասներու շար-

քը : Սորա , տգիտաց յանդգնութեամբ , կը ժպրհին մերթ , բնութեան վայելչապէս կատարածը սրբագրելու : Իսկ սոցա սովորական ըզբաղմունքն է , ոչ միայն յղի կամ տղաբեր կանանց , այլ և դեռածիններուն իսկական կամ կարծեցեալ ախտից դարման տանելու պատրուակաւ , նոցա մօտ միջամտել անդադար : Եւ սակայն գիտութեան մէկ ճշմարիտ սկզբունքն է թէ , որքան քիչ գեղ լինի դեռահաս մէկ տղու , նա այնքան աւելի դիւրութեամբ կ'առողջանայ իւր տկարութենէն , և թէ , նորածին մանկանց բժշկական միջամտութիւնն , ըստ մեծի մասին , առողջապահական խնամքներէ պէտք է բաղկանայ :

Մարդուս այն վափուկ հասակին մէջ անյարմար եղանակաւ զայն տածելն և նորա ազատօրէն զարգանալուն արգելք լինելն , դատապարտել է խեղճ էակն ցկեանս վատաւոյլութեան և շատ անգամ եւս կանխահաս մահու : Այսպէսով գուցէ իսկ յապագային , իրեն օգտակար մէկ անդամէն զրկել է Հայրենիքն :

Ներկայ գրքոյկս որ Գաղղիոյ մէջ հազարաւոր օրինակներով տարածուած և արդէն տասն լեզուի թարգմանուած է այլ և այլ երկիրներ , մեք եւս կ'ընծայեմք մերազնեացս , իբրեւ մի հմուտ և փորձառու առաջնորդ , յորմէ ծնողք կարող են խրատ առնուլ , եթէ կ'ուզեն իրենց մանկանց մարմնաւոր բարդաւաճմանն ականաւեսս լինիլ խնդամիտ :

Սորա մէջ նշանակուած անտեղութիւններէն ոմանք անձանօթ են արեւելքի մ. շ, բայց նոցա լիուլի փոխարէն ուրիշ զեղծումներ եւս չեն պակսիր աստ : Այս վերջիններէն մէկ քանին են որ մասնաւոր ծանօթութեամբք նշանակել հարկ համարեցաք :

Այս հրատարակութիւնս ազգին մէջ պակաս մը կը լնու ըստ մեզ, քանզի սորա նախորդն, որ մեր մեծապատիւ բարեկամն և արհեստակից Տօքթօու Սէրվիչէն հեղինակած է, 1844 ին, «Մանկատածութիւն» անուամբ, — գործ արդիւնաւոր և լի հմտութեամբ, ինչպէս ամեն ինչ որ կ'ենէ իր գրչէն, — ոչ միայն իւր ստուարութեամբք գիւրամատչելի չէ եղած շատերուն, այլ և նորա օրինակները բոլորովին սպաւած են այժմ :

Թ. Ա. Բ. Գ. Մ. Ա. Ն. Ի. Զ. Ն.
 ՏՕԲ. Տ. Ս. ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ
 ԱՆՊԱՄ ԳԱՂ. ԱՌՈՂՁ. ԸՆԿ.

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ

	Ե:—
ՄԻՅԱՆՔ	1
ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ	2
ՅԱՌԱՋԱԲԱՆ ԳՈՐԾՈՅՆ	1
ԳԼՈՒԽ Ա. Խրատք առ մայրն մանկան ծնանէէն աւաջ	2
ԳԼՈՒԽ Բ. Մանուկը սնուցանելու այլ և այլ կերպերն	3
ՅՕԴ. 1 - կաթնտուութիւն միմիայն մօրն ստինքէն	6
ՅՕԴ. 2 - կաթնտուութիւն միմիայն դայեակի ստինքէն	12
ՅՕԴ. 5 - կաթնտուութիւն միմիայն ծծակով, այն է արհեստական կաթնտուութիւն	16
Ծծակ	18
ՅՕԴ. 4 - Ստինքէ և ծծակէ խառն կաթնտուութիւն	21
ՅՕԴ. 5 - կաթնտուութիւն էգ կենդանիի մը ստինքէ (այծ)	22
ԳԼՈՒԽ Գ. Ստուգատեսութիւն տղայոց առողջութեան կշռումք	24
ԳԼՈՒԽ Դ. կաթնահատութիւն	27
ԳԼՈՒԽ Ե. Ատամնաւորութիւն	29
ԳԼՈՒԽ Զ. Հանդերձք	51
Մարմնական խնամք	55
Տղայք պառկեցնելու եղանակն	57
ԳԼՈՒԽ Է. Բնակութիւն	59
Օք	41
Լոյս	45
Աստիճան ջերմութեան	44
Ձայն	45
ԳԼՈՒԽ Ը. Դուրս ելնել Մարմնավարժութիւն : Շրջագայութիւնք	45
ԳԼՈՒԽ Թ. Պատուաստ	48
ԳԼՈՒԽ Ժ. Եզրակացութիւն	52

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՏԱԾՈՒՄՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Մանկունք ընկերութեան եւ հայրենեաց ասպազան են: Պէտք է ուրեմն զանոնք մեծցնելու կերպն իբր կենսական եւ յոյժ կարեւոր մի խնդիր նկատել եւ ամէն ոք պարտաւոր լինի նորա վրայ հոգ տանել մտադիր: Բժիշկք եւ առողջաբանք եւս իրենց պարտականութիւն պէտք է համարին տարածել զայն ժողովրդեան մէջ որքան հնարաւոր է:

Արչափ որ մայրական գորովանքն եւ նորա մտատեսութիւնը շատ անգամ հրաշքներ կը գործեն 'ի մնարս օրօրոցին, սակայն ստէպ կը պատահի որ, հակառակ այն սիրոյն եւ անձկալի խնամոց որ մայր մը միայն կարող է ունենալ իր որդւոյն համար, ծանրապէս կը շուարի նա կամ միմիայն դժուարին տարակուսանքով կը պաշարի եւ չը գիտէ թէ ինչ կերպով պէտք է վարուի իւր նորածինը խնամելու համար:

Մանկական առողջապահութեան սկզբունքներու մասին գտնուած այս անդիտութեան քով կանգնած կը տեսնեմք հին նախապաշարումներ, որք, փորձառութեան պատրուակաւ, դաս մը անձանց մէջ մօրէ 'ի դուստր կ'աւանդուին յարատու, եւ չափազանց խօսած չեմք լինիք ըսելով, որ ընկերութեանց այդ վէրքերն աւելի մահապիթ եղած են մանկաւոյն քան իրենց հասակին յատկացեալ հիւանդութիւններն:

Պիտի ջանամբ ուրեմն այս գրքոյկիս մէջ, խիստ համառօտ բայց խիստ բացայայտ կերպով, բովանդակել առողջապահական այն կանոններն որք զեռածին անկանց տածմանը կը վերաբերին :

ԳԼՈՒԽ Ա.

ԽՐԱՏՔ ԱՌ ՄԱՅՐՆ՝ ՄԱՆԿԱՆ ԾՆԱՆԵԼԷՆ ԱՌԱՋ

Յղութեան հետ, մօր մը համար, նոր կեանք մը կ'սկսի : Պէտք է ուրեմն որ մայրութեան պարտաւորութիւններն ուսանինա եւ նորա հրճուանքն զգայ կանխապէս : Խիստ կարեւոր է որ մայրն այն կացութեանը մէջ, որքան որ իր վիճակը կը ներէ, լաւ սնանի, բայց այնպիսի մէկ կերպով որ կարող ըլլայ սոյնօրինակ շարունակել ամբողջ կաթ տուած ժամանակն : Ամենէն թանկագին ուտելիքները չեն լաւագոյններն : Ուտելիք մը որքան պարզ լինի բաւական է, միայն թէ զան փոքր ինչ փոփոխական ընելու է : Պէտք է գլխաւորապէս զգուշանալ գրգռիչ ուտելիքներէ, ինչպէս են համմբ, քաֆէն եւ ցգիններն (1) : Իսկ գինին, խնձորօղին (cidre), գարեջուրը կամ ուրիշ ոգելից ըմպելիքները խիստ չափաւորապէս գործածելու է : Կերակուրները պէտք է պէսպէս լինին եւ անոնց մէջ բաւական քանակութեամբ գտնուին միան ու բանջարեղէնք : Այս կերպ անա պէտք է սնանի կին մը որ սնունդ առնու եւ կաղզուրի, մանաւանդ եթէ կանոնաւոր կերպով մարդէ ազատ օդի մէջ :

Յղի կնոջ մը հագուստները պէտք չէ նեղեն թէ ի-

(1) Ասոնց կարգն է նաեւ ծխախոտը :

րենց ծանրութեամբն եւ թէ վտանգաւոր կերպով մարմինը սեղմելով : Պէտք է որ ոտքերն, որովայնը եւ մէջքը ազատ ու արձակ լինին՝ որպէս զի բնութեան տակաւ առ տակաւ պատրաստած ճգնաժամն յաջող ելք մը ունենայ :

Պէտք է նաեւ որ ուժգին շարժումներ ընելէ զգուշանայ, աթոռի կամ սանդուղքի վրայ չենէ եւ մանաւանդ չը ցատկէ, ծանր բաներ վեր չառնէ կամ չը կրէ : Վախը, բարկութիւնն եւ սաստիկ յուզմունքներն եւս վտանգաւոր են : Իսկ գալով յղի կանանց տենչին (envies - Քրէ) որ յղութեան ժամանակ ստեպ կը պատահի, հաստատապէս պէտք է գիտնալ որ եթէ անհր-նարին լինի կնոջ զգացած իղձը կատարել, սչ երբէք ծնելիք մանուկն զայն յիշեցնող նշանը պիտի կրէ մարմնոյն վրայ : Ամենէն աւելի զաւելին վրայ աղղեցութիւն ընողը նորա ծնողաց եւ մանաւանդ մօրն առողջութիւնն է (1) :

Եթէ յղութեան վեցերորդ ամսոյն մէջ պոկուռքը կամաց մը սեղմուի, գրեթէ անգոյն հեղուկ մը դուրս կը հոսէ : Այն հեղուկն է կաթին գալուս նշանն եւ որ ԴՄԼ կը կոչուի (colostrum) :

Անկէ քիչ ատեն վերջը՝ պէտք է որ մայրը կաթընտուութեան պաշտօնին պատրաստուի եւ ասոր համար օրն երկու կամ երեք անգամ մեղմաբար շփէ իւր

(1) Այս նախապաշարու մը մեր մէջը եւս կայ, որու մեկնութիւն տալ կը կարծեն զոյն թուրքաց հետ Խըրեւելէն նաև անուանելով ծնած մանկան մորթին վրայի պատահական բիծերն, երբ թէ տարւոյն այն օրը (25 ապրիլի) եթէ արտաքայ կարգի եղելութիւն մը պատահի, 'ի յիշատակ այն եղելութեան, տղան նշան մը կը կրէ մարմնոյն վրայ : Այս արտառոց գաղափարը պէս պէս անյարմար գիպուածոց պատճառ կը լինի երբեմն ընտանեաց մէջ : Ո՛րքան տղայք բիծով կը ծնին և որոնց մօրը յղութեան ժամանակն ապրիլի 25րդ օրը չէ հանդիպած :

ստինքներն ու պտկուճքն : Եթէ այս վերջինները բաւականապէս ցցուած չեն , պէտք է դասոնք դէպ 'ի յառաջ քարչել ամենայն զգուշութեամբ եւ կամ փոխանակ մատերու խիփէ մասնաւոր սրուակով մը : Ամենէն լաւն է մեղձ կերպով ծծելը , նա մանաւանդ երբ դուն ուշ կը գոյանայ (1) :

Կաթնտուութեան պաշտօնին համար այս նախապատրաստութիւններն անհրաժեշտ են , գլխաւորապէս այն կանանց համար՝ որք կը վախնան թէ , ստեանց փոքրութեանը կամ պտկուճքին անյարմար ձեւին համար , կաթ պիտի չկարենան տալ : Այս մասին պնդելնուս միակ պատճառն այն է որ խորհուրդ կը տամք մայրերուն , որքան հնար է , իրենց զաւկներն էրէնց կաթնով սնուցանեն , վասն զի դանոնք դայեակի մը յանձնել որ առնէ տանի խնամելու եւ կամ ծծակով (biberon, պօպուճ) կաթ կերցնելը շատ վտանգներ ունին :

Քանի մը տարիէ 'ի վեր նոր առուտուր մը երեւան ելած է Գաղղիոյ մէջ սփռուածն աբսոլտ յորջորջանքով : Այս բանն երկրին ժողովրդեան օր ըստ օրէ պակսելուն բացայայտ պատճառներէն մին է , եւ յօրինուած վիճակագրական ցուցակներն հետեւեալ արդիւնքը ցոյց կը տան : Մէկ օրէ մէկ տարեկան մանկանց համար , որոնց մայրն է ստնտու , մինչդեռ մահը հարիւրին 3 էն 10 է , մինչեւ հարիւրին 40 կը բարձրանայ այլ եւ այլ տեղեր օտար ստնտուի խրկուած մանկանց մէջ : Կան նաեւ նահանգներ որ այս մտնող մանկանց թիւը մինչեւ հարիւրին 30 ի եւ 70 ի կը

(1) Կաթնտուութեան ժամանակ պատահելիք պտկուճքին բորբոքումներուն և ճայթուցումներուն առաջին առնելու համար՝ յըրթեան ատենէն անոնց բոլորաբար տըրուկ դնելը՝ բոլորովին անտեղի և անօգուտ նախազգուշութիւն մըն է :

հասնի (1) : Այս հետեւութիւններն , որ բժիշկք եւ առողջաբանք լաւ գիտեն , սակաւին ընտանիքներուն ըստ բաւականի ծանօթ չեն (2) :

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՆՈՒԿ ԱՆՈՒՅԱՆԵԼՈՒ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԿԵՐՊԵՐՆ

Նորածին մանուկ մը միմիայն երկու տեսակ պիտոյք կ'ըղայ : Կաթ ուտել եւ քնանալ : Պէտք է ուրեմն իր կենաց պիտանի այս երկու հանգամանքները կարգի դնել վաղ ընդ փոյթ :

Հարկ չէ ըսել որ նորածին մը , ամէն բանէ առաջ , պէտք է կաթով սնանի , վասն զի կաթն իրեն համար բնական եւ կարգաւ մտուց մըն է , այն է ըսել թէ կաթն իր մէջը կը պարունակէ ինչ որ պէտք է նորա մարմինը բարկացնող ամէն գործարանները պակսելու եւ աճեցնելու համար (3) :

(1) Կան այլ Եւրոպական երկիրներ որ այս կորուստը Գաղղիայէն աւելի եւս զգալի է :

(2) Մանուկը ծնողաց տունէն դուրս տեղ ստնտուի յանձնելը մեր մէջ խիստ հազուադիւր սովորութիւն մը լինելով , նոցա կանխահաս և յաճախագոյն մահուան պատճառներէն մին չը կայ մեր մէջ ինչպէս 'ի Գաղղիոյ և այլ ուրիշ երկիրներ : Փոփաքելի ևս է որ այդ սովորութիւնը բնաւ չը մտնէ մեր մէջ : Իւրոյ տանը մէջ իսկ եթէ ստնտուին ամէն շարժմանց 'ի մտոյ զգուշութիւն չը լինի , այդ ալ նորածինին առողջ զարգանալուն կրնայ արգելք լինիլ , վասն զի վարձկան ստնտուք ըստ մեծի մասին տգէտ և խտասիրտ լինելով , չեն վարանի կամաւ կամ յանգէտս այլ և այլ միջոցներով գիեցելին առողջութեանը փլատել որ իրենց անձին հանգստութիւնը չը խանգարի :

(3) Նորածինը միմիայն կաթով սնուցանելու պէտքը բնութիւնն իսկ ցոյց կը տայ , զի ծնունդն և ստինքներէ կաթ բըղ-

կաթ տալու այլ եւ այլ եղանակներն այս տեղ պիտի քննեմք եւ պիտի տեսնեմք թէ անոնք ինչ առաւելութիւններ եւ ինչ անպատեհութիւններ ունին : Կաթնտուութիւնն հետեւեալ հինգ կերպով կը կատարի :

1. Կաթնտուութիւն միմիայն մօրն ստինքէն :
2. Կաթնտուութիւն միմիայն դայեակի ստինքէն :
3. Կաթնտուութիւն միմիայն ծծակով . (Արհեստական կաթնտուութիւն) :
4. Կաթնտուութիւն ստինքէ եւ ծծակով . (Սառն կաթնտուութիւն) :
5. Կաթնտուութիւն կենդանիի մը ստինքէ , ընդհանրապէս այծի :

307. 1. ԿԱԹՆՏՈՒՌՈՒԹԻՒՆ ՄԻՄԻԱՅՆ ՄՕՐՆ ՍՏԻՆՔԷՆ

Նախ՝ սա հիմնական սկզբունքն հաստատեմք որ սակ մայրական կաթնտուութիւնն ամենէն լաւ մէթոտն է մանկան մը տածման համար , նա է խսկապէս յարմարագոյնն եւ նա ճշմարիտ եւ ապահով կերպով նորա օգտակարը : Մայր մը պէտք է ինքն անձամբ սնուցանէ իր զաւակն . այն է ընութեան եւ բանաւորութեան հրամանը : Մայրական կաթը դիեցիկին համար ընտրելագոյն սնունդն է եւ այլ ոչ մէկ սնունդ կարէ նորա հետ բաղդատուիլ : Ամենէն ընտրեալ դայեակին կաթը չէ կարող մօրը կաթին հաւասարիլ : Բաց յայտմանէ , եթէ մօրը կաթնտուութիւնը մանկիկին համար իրապէս շահաւոր է , միւս կողմանէ մօրն առողջութեանն եւս հաւասարապէս օգտակար է : Յղութիւն , ծննդաբերու-

իւն ի միասին կը կատարեն : Բաց յայտմանէ նորածին տղան ստամոքսն եւ աղիքները տակաւին քանի մը ամիսներ պէտք եղած կատարելութիւնը չունին որ կարողանան կաթէն ուրիշ ուտելիք մարտել :

թիւն , կաթնտուութիւն , բոլոր ասոնք պէտք է նկատուին իբր մի եւ նոյն շղթային օղակները , գորս մայրը չէ կարող խորտակել առանց իր անձին վնաս բերելու : Եւ յիրաւի , հանապազօրեայ փորձառութիւնն՝ որ բժիշկներն եւս կը հաստատեն , ցոյց կը տայ թէ , այն մայրն որ կաթ չըտար , շատ մը փոքրիկ անհանգստութեանց եւ շատ անգամ եւս առողջութեանը խանդարման եւ ծանր հիւանդութեանց ենթակայ է : Այս ըսել չէ թէ կաթ տուող մայրն անխափան ազատ է այդ պատահարներէն . բայց սա եւս անուբանալի է որ իր մանկան ինքն անձամբ կաթ տուող մայրն ուրիշներէ առաւել դիւրաւ եւ շուտ կ'ամռքի հիւանդութիւններէ եւ անկէ վերջն եւս առողջ կրնայ մնալ : Անշուշտ պէտք է խոստովանուիմք որ կաթնտուութիւնը ծանրակշիռ պաշտօն մըն է , շատ անգամ դժուարին եւ միշտ գերի ընող , բայց նորա պատճառած ճգանց եւ տաղտկութեանց քով կաթնտու մայրն իր հրճուանքն եւ փոխադարձ հաճոյքներն ունի : Մայրական ստինքոյն է միայն որ ամենէն զեղատեսիլ եւ կայտառ մանկուէքը կը գոյանան : Մանկան ծննդեանը միջոցին , մայրն ամենայն մասամբ եւ սքանչելապէս պատրաստուած է կաթնտուութեան կարեւոր պաշտօնը վարելու :

Ծննդաբերութենէն քանի մը օր վերջը , ստինքներէն բղխած կաթն , որ դալին կը յաջորդէ , անդոյն է եւ սակաւ , եւ տակաւին քաւին սեպհական յատկութիւններն ունի : Այս արտաթորումն (sécrétion) աներկբայաբար իր օգուտն ունի , որ է օգնել նորածինին իր մէկոնիոնը (meconium) արտաքսելու , այն է իր առաջին կարիքն : Այսպէսով հարկ չը մնար եղերգի կամ դեղձի ծաղկանց շարաբները (sirop) խմցունել նորածին մանկանց ինչպէս կ'ընեն տան տիկիներն իբրեւ անհրաժեշտ պարտաւորութիւն մը , եւ որք , ոչ մի-

այն անօգուտ են, այլեւ շատ անգամ վնասաւոր :
 Բուն կաթն ութը կամ տասն օրէն վերջն երեւան
 կը դայ : Ասկէ կը հետեւի որ կաթը թէ իր անդական
 յատկութիւնն եւ թէ քանակութիւնն աստիճանաբար
 կ'ստանայ եւ այսպէս լինելովն սքանչելի կերպով կը
 յարմարի նորածինին դործարանաց անցողական վի-
 ճակին :

Մայրական կաթնատուութիւնն այսպէս նախամեծար
 համարելով չեմք ուզեր սակայն պարտաւորիչ հռչակել
 զայն : Մեր դիտաւորութիւնն այդ չէ ընաւ, բայց
 այնպէս կը կարծեմք որ, 'ի բաց առեալ կաթի չզոյու-
 թիւնն եւ ծննդաբերութենէ յառաջ եկած կնոջ վա-
 տառողջ վիճակն որ չը ներեր կաթ տալ, կինն այն ա-
 տեն այդ պաշտօնէն կրնայ հրաժարիլ, երբ էական ար-
 գելք մը ունի քօչկէն եւս հաստատուած : Բաց 'ի ըն-
 կերական այլ եւ այլ վիճակներէ որք կ'արգելուն իրեն
 կաթ տալն, պէտք է որ նա արտաքին խիստ առոյգ ե-
 րեւոյթէ եւ կատարեալ քաջառողջութենէ մը աւելի
 հասարար յօշարակամութիւն ունենայ (1) :

Տղայ մը թէ մայրական կաթով եւ թէ օտար ստրն-
 տուի մը կաթովն երբ կը սնանի, մասնաւոր պայմանք
 անհրաժեշտ են որպէս զի այդ կաթնատուութիւնը յաջո-

(1) Այն մայրն որ կամի իր զաւկըները անուցանել պէտք է որ
 իր անդրանիկէն սկսի : Առաջին ծննդաբերութեան տտեն առ-
 ջի երեք կամ չորս օրերն այնքան տառապելի չեն, որքան երկ-
 րորդ կամ երրորդ զաւկին ծննդեան միջոցին : Ուրեմն, եթէ
 երկրորդէն սկսի ինքը կաթ տալ, աւելի նուազ յաջող պարա-
 դայներու մէջ սկզբնաւորութիւն ըրած կը լինի այդ ծանր պաշ-
 տօնը վարելու : Նոյնը պէտք է ըսեմք ստիկներուն և պրտ-
 կունքին բորբոքմանց մասին, որոնք յաճախագոյն են երկրոր-
 դական ծննդաբերութեանց ժամանակ եթէ կինն իր անդրա-
 նիկին կաթ չէ տուած : Բարոյականութիւնն եւս այնպէս կը
 պահանջէ որ մայր մը իր զաւկըները անխտիր դայելի :

դապէս 'ի կատար ելնէ : Հարկ է ուրեմն որ այս տեղ
 ստինքով բուժմանը վերաբերեալ առողջապահական
 դիւսաւոր կանոններն հաստատեմք :

Ա. Ազատումէն երկու կամ երեք ժամ վերջը մա-
 նուկը պէտք է մօրն ստինքին մօտեցնել, ու թէ որ
 հարկադրուած են կաթնատուի մը գալուն սպասել, փո-
 քըր դրգալով շաքար-ջուր տալ անոր, բայց որքան հը-
 նար է քիչ քանակութեամբ (1) :

Բ. Եթէ նորածինը չէ կարող ծծել, պէտք է անոր
 լեզուին վիճակը քննել : Այս մասին նախապաշարուած
 մը կը տիրէ շատ տեղ, այն է կարծել թէ մանուկը
 կաթ կամ կէտ (fillet) ունի : Այս կասկածը շատ անգամ
 իրաւացի է եւ բժիշկը մկրատի մէկ հարուածով կրնայ
 ամէն բան իր բնական վիճակին մէջ դնել, բայց այս
 փոքր կազմական թերութիւնը տան տիկիններուն կար-
 ծածին չափ յաճախ չը պատահիր :

Գ. Նստած կամ լաւ մը կնթնած կաթ տալն ամե-
 նէն դիւրին դիրքն է, բայց ծնանելէն յետոյ առջի մէկ
 քանի օրերը բաւական է մէկ կողմ դառնալ զգուշու-
 թեամբ եւ այնպէս կաթ տալ (2) :

Դ. Գիեցմանց ժամերուն կարգադրութիւնն ամենէն
 կարեւոր կէտերէն մին է կաթնատուութեան խնդրոյն
 մէջ, եւ առջի օրէն հարկ է որոշել թէ որ ատեն եւ որ-

(1) Բոլորովին մերժելու է մանկաբարձներուն կամ այլոց ա-
 ռաջարկած այլ և այլ խառնակ ըմպելիքները, մինչեւ անգամ ա-
 նիստի ջուրն : Առջի ժամերը նորածինին բնաւ խմել չըտալն ևս
 նորա բնական մէկ պէտքն առանց պատճառի չը յաղեցնել և
 հետեւաբար վնասակար լինելով, լոկ ջուրը կամ շաքար-ջու-
 րը բաւական են նորա ծարաւն անցունելու համար :

(2) Այս գզուշութիւնը մանաւանդ 'ի նպատտ մօրն է, վասն
 զի քանի մը օրեր տղաբեր կին մը պէտք չէ նստի կամ սաստիկ
 շարժումներ ընէ անկողնոյն մէջ, եթէ կ'ուզէ ծննդաբերութեան
 չարհետեանքներէն զերծ մնալ :

քան ժամանակ պէտք է ուտէ մանուկը : Նորածին մը պէտք է երկու ժամ ՄԵԿ ԱՆԳԱՄ կաթ ծծէ ցերեկին եւ միայն երեք կամ չորս ժամը մէկ անգամ դիչեր ատեն (1) : Ամէն կաթ տալը պէտք չէ տասը կամ տասներկու վայրկեանէն աւելի տեւէ : Պտկունքին ճարճատմանց տեղի չը տալու համար ամենէն լաւ միջոցը զանոնք զգուշութեամբ եւ փափուկ կտաւով մը սրբելն է ամէն կաթ տալէ վերջը :

Ե. Շատ օգտակար է, թէ նորածինին եւ թէ նորա կաթնոտ մօրը լաւութեանն համար, կանխապէս վարժեցնել զմանուկն որ քիչ անգամ կաթ ծծէ գիշեր ատեն : Այս փորձը վեց շաբաթ կամ երկու ամիս վերջը պէտք է ընել, այնպէս որ կէս գիշերէն շուրջ երկու ժամ յառաջ լաւ մը զայն ստինքէն յաղեցնելէն յետոյ, միւս անգամ երկրորդ առաւօտուն միայն պէտք է կաթ տալ շուրջ առջի իրիկուան ուտելէն եօթն կամ ութն ժամ վերջը :

Զ. Աղեցէն եօթերորդ ամիսը միայն, կամ առաջին ակուային երեւնալէն վերջը, կարելի է կաթէ զատ ուրիշ ուտելիք տալու սկսիլ, վասն զի նոյն հասակին

(1) Պէտք չէ բնաւ մոռնալ իր կաթ արուելուն միմիայն նպատակն է տղուն մոռնալ հայրն ու մայրն ու անոր ածմանը նպատակը, ոչ թէ զըօցունել զայն կամ ստինքով մոռցնել տալ իրեն ուրիշ մէկ պիտոյքը կամ ցաւն որոց համար կ'ողողակէ : Նորա ամէն լոցած ժամանակ կաթ ուտելու վարժեցնելը կրկնապէս փնաս է նորածինին : Նախ առջի կերած կաթին մարտդութիւնը չըկատարած. կրկին նորա ստամոքսը բեռցնելով կը փնաս անպատճառ : Երկրորդ՝ իր մօրն անդադար անհասկալիութիւն կը պատճառէ, նա մանաւանդ գիշեր ատեն, որով նա ցուրտէ եւ քնհատութենէ հիւանդանալով, տալիք կաթն իր յատկութիւնները հուսկ ուրեմն անտի կը կորսնցունէ եւ կաթնատունը կը փնասի դարձեալ : Ամենայն ինչ սովորութիւն է մարդուս կենացը մէջ, որքան որ փոքր լինի նորա տարիքը :

մանկան ստամոքսն ըստ բաւականի պատրաստուած է լէլէ-սպոր մը մարսելու : Մօրը կամ ստնտուին կաթին հետ եւ օրը մէկ անգամ կրնայ արուիլ մսի ջրով եփուած է-ռօ-ռօ-լ (arrow-root, արարօլ) սպոր - (որ տեսակ մը արմաւենիէ հանուած ալիւր է) - Լ-սօ-թ-թ-թ, փշրուած պարսիստ, վարսակի (avoine) ալիւր եւ լաւ եւս ցորենի ալիւր փոքր ինչ բովրած կամ փուռի մէջ շորցուած : Բայց աւելի լաւ է նախ կէս մը կարմրած հացով եւ ջրախառն հացաթան (panade, լէ-լէլ) տալ, որ երկար ատեն մեղմ կրակի վրայ կ'եփեն քիչ մը շաքար եւ աղ զնելով եւ ապա ցանցառ մաղէ մը կ'անցունեն : Պէտք է ուշ զնել որ այս արուած հացաթանները նախ խիստ փոքր քանակութեամբ սկսուին եւ ամէն օր մի եւ նոյն ժամուն արուին, մանկան կաթ ուտելէն երկու ժամ վերջն : Այնուհետեւ վրայէն բան մը խմցունելու պատճառանքով կրկին ծիծ տալու չէ : Մանկան ծարաւն անցունելու համար նախապատիւ է զուտ ջուր տալ մի սակաւ եւ կամ շաքար-ջուր, կամ նաեւ խիստ քիչ գինիով գունաւորուած ջուր (1) : Եթէ մէկ քանի օր մանուկն այս հացաթանը կարողացաւ մարսել, խիւս (bouillie, Լ-սօ) կամ թեթեւ ապուրներ տալ սկսելու է, նախ անիւղ արգանակով : Կրնայ նաեւ հաւու արգանակով եփուած թարիօքա կամ ուրիշ տեսակ տեսակ ալիւրներ արուիլ :

Մանուկներէն ոմանք կաթով ապուր չեն ուտեր եւ աւելի կ'ախորժին խաչուէն (bouillon, միսի ջուր) : Ինչ որ ալ արուի ուտելու, առջի ժամանակներն օրը մէկ ապուր բաւ է եւ իններորդ կամ տասներորդ ամիսներուն մէջ միայն կրնայ երկու անգամ արուիլ :

(1) Գինիին ամենափոքր քանակութեամբ գործածութիւնը վաճառքի է որ մեր մէջն եւս տարածուի, նա մանաւանդ տկար կազմուածքով տղայոց համար :

Խոհեմութիւնն է զգուշանայ տեսակ տեսակ բաղադրութիւններէ, զորս խանութպանները կը հռչակեն իբր կաթին եւ մանուսանդ արգանակին տեղը բունող (1) :

Մեծ սխալանք մըն է կամենալ տարածամ մնուցանել տղայք օտար ուտելիքներով : Բնութեան բունութիւն բանեցնելն երբէք շահաւոր չը կրնար լինիլ (2) : Ութերորդ կամ տասներորդ ամիսներուն կրնայ հաւկիթ արուիլ թերխաչ կամ արգանակով եփուած հացաթանի հետ խառն եւ կամ թաքիօքայով ապուրի հետ : Այսպէս աստիճանաբար կաթէն կտրելու ժամանակին կը հասնուի, որուն վրայ քիչ մը ետքը պիտի խօսիմք :

307. 2. ԿԱԹՆՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԻՄԻԱՅՆ ԴԱՅՆԱԿԻ ՍՏԻՆՔԻՆ

Եթէ մայրական կաթը չը կրնար տրուիլ մանկան, հարկ կը լինի անոր տեղ օտարի մը կաթը տալ, որքան հնար է լաւ հանդամանքներու մէջ : Ինչպէս ասկէ առաջ հաստատեցինք, թէ պէտք է միշտ բժշկին կարծիքն առնուլ եւ ապա որոշել այն կարեւոր խնդիրը թէ մայրը կարող է թէ ոչ կաթ տալ իր տղուն, նոյնպէս բժշկին միջամտութիւնն հարկ է նաեւ դայեակի մը ընտրութեան համար : Այս ընտրութիւնը դիւրին չէ եւ այս մասին աճապարանօք վարուիլն ազետալի հետեւանքներ կրնայ ունենայ :

Դայեակէ կաթնտուութիւնը ծնողաց տանը մէջ կը

(1) Ասոնց կարգն են բռնուցանուող շատ տեսակ պարսիմաստներ դուրսէն եկած, թանձրածեալ կաթը, մսի հիւթը (Extrait de viande) և այլն, և այլն, որոնք ծանուցուցներու մէջ կարգացուածին չափ սննդական յատկութիւն չունին :

(2) Շատ անգամ տղայոց որովայնածութիւնն (diarrhée) և նիհարութիւնը ժամանակէն առաջ դուրսէ ուտելիք ուտելէն ուրիշ պատճառ չունին :

լինի մօրն հսկողութեանը ներքեւ — եթէ այս կարելի է ընել, նախապատիւ է միշտ — եւ կամ դայեակին տունը, ամէն հսկողութենէ հեռի : Դայեակներն ընդհանրապէս գիւղերը գտնուելովն, այդ անհսկողութենէ յառաջ եկած չարիքը փոքր ինչ կը մեղմանայ :

Նախ եւ յառաջ որոշեմք թէ լաւ ստնտու մը ինչ յատկութիւններ պէտք է ընծայէ : Ա. Տարիքն 20 էն մինչեւ 30 : Բ. Գոնէ երկու ամիսէ 'ի վեր պէտք է դաւակը բերած լինի եւ երբէք առ առաւելն եօթն կամ ութն ամիսէ 'ի վեր : Գ. Պէտք չէ որ եւ իցէ բիծ կամ սպի կրէ վիզին վրայ, թեւերուն ներքեւ եւ գլուխը, նոյնպէս մատերուն վրայ ըզունգներուն մօտ : Դ. Ըստինքները լաւ կազմուած պէտք է լինին, առանց սպիի, պակուսքը ցցուած եւ աւելի մեծ քան թէ փոքր : Ե. Վիտորները վարդեգոյն, ակուայներն առողջ, կանոնաւոր եւ ուղղաշար : Զ. Ուտերը լայն եւ մտտ : Է. Դաշտանը պէտք չէ տեսնէ : Ը. Յղի չը լինի : Թ. Հանդարտաբարոյ բնութեամբ, անաղա բարութ, ծիծաղաղէմ եւ հաճելի տեսքով : Ժ. Արդէն կաթ տուած պէտք է լինի, այսինքն երկու կամ երեք զաւակ ունեցած, կամ գոնէ տղայ ինամելու կերպը գիտնալու է : ԺԱ. Վերջին ծայր մաքրասէր լինելու է թէ իր եւ թէ դիեցիկին մարմնոյ մասին : ԺԲ. Ահաւորեալ կերպով պէտք է հաստատուել տայ թէ իր ծնած զաւակը քաջառողջ է :

Հարկ չէ ըսել որ վերոյիշեալ յատկութիւններուն շատերը կը պահանջուին եւս այն մայրէն որ կ'ուզէ իր ազան ինքն սնուցանել :

Եթէ դայեակը տուն առնուած է, պէտք է, որքան որ հնար է, իրեն սովորական եղած ուտելիքները տալ : Նորա մնունը պէտք է խառն լինի, այսինքն միսէ եւ բաջարեղէններէ բաղադրեալ : Զուրին մէջ փոքր ինչ գինի միայն պէտք է խառնէ, վասն զի չափէն ա-

ւելի զինի եւ մանաւանդ ոգելից ըմպելիք եթէ խմէ նորա կաթնաստունը կրնայ ցնցումի (convulsions, «բռն-»
Տ) ենթարկիլ (1) :

Ստնտունն ուտելիքներն այն կերպով պէտք է կարգադրուին որ իր արտաքսուսները կանոնաւոր լինին եւ զիւրին : Կաթ տուող կին մը իր մարմնական ծախիւքը կը սնուցանէ զմանուկն , պէտք է ուրեմն որ իր կուրուստին տեղը լեցունէ : Անոր համար խիստ կարեւոր է որ կանոնաւոր կեանք մը վարէ , առանց չափազանց հոգնութեան եւ առանց սովորականէն աւելի զիշերն հսկելու : Վերջապէս խոհեմութիւն է զգուշանալ ուժգին յուզմունքներէ , որք աղետալի կերպով եւ անուզղապէս կ'ազդեն մանկան առողջութեանը վրայ (2) :

Գայեակն եւս իր կաթնաստունին նկատմամբ մօրը համար վերը յիշուած կանոններուն պէտք է հետեւի , ամէն երկու ժամ միայն կաթ տալով (3) : Պէտք չէ

(1) Այս կամ այն ուտելիքներով կամ դեղերով կաթին որակութիւնը փոխել ուզելն անտեղի գաղափար մըն է : Այս բանը կարելի է ընտանի կենդանեաց համար , բայց մարդկային սեւին համար եղած փորձերն յաջողութիւն չեն գտած մինչեւ ցայսօր : Զգելու է ուրեմն որ գայեակը , երբ առողջ է եւ մարտողութիւնը կանոնաւոր , իր ախորժած ուտելիքներն ուտէ չափաւոր քանակութեամբ , զի ամէնքն ալ հաւատարապէս կ'օգնեն կաթին գոյանալուն :

(2) Պէտք չէ որ ստնտուն կրկին անգամ յղանալու վտանգին ենթարկի , քանզի իր շահէն չը զրկուելու համար կարող է երկարատեն իր այս նոր վիճակը ծածկել եւ կաթնաստունին փնտս պատճառել : Մինչդեռ մայր մը իր զաւակը սնուցած ատեն եթէ այսպէս եղելութիւն մը պատահէ «ֆոլ-» կաթ է կը կտրէ զայն :

(3) Տղայք ցերեկ ատեն շատ կը քնանան եւ միայն կաթ ծրծելու համար կ'արթնան : Եթէ նորածինը չափէն աւելի կը ննջէ , ստնտուն պակասութիւն մը ունի անշուշտ քննութեան կարօտ , որով դիտելիք շատ ճիշդ թափելէն ետքը չըկարենալով

երբէք որ մանկան ճիշդ կամ քաղցը հանդարտեցնելու համար սուսկի կամ սպունգի կտորներէ շինուած կծիկներ դնեն նորա շրթանցը մէջ եւ որոնց ուսմկօրէն էֆուէ (nouet) կ'ըսեն (1) : Գայեակը լաւ համոզուած լինելու է որ ժամանակէն առաջ մանկանց ուտելիք տալն անօգուտ է բոլորովին : Այս մասին ամէն բժիշկը համակարծիք են եւ չեն թոյլ տար որ առջի հինգերորդ կամ վեցերորդ ամիսներուն մէջ տղայոց խիւս կամ հացաթան տրուի : Ալիւրեղէն ուտելիքներն եւ արգանակն երբէք նոցա խիթքը պակսեցնելու յատկութիւնը չունին : Միւս կողմանէ փոխելն եւ կանաչ գոյնով լուծողութիւնն , որք առաջին մանկութեան հիւանդութեանց երկու յաճախագոյն նշաններն են , ուրիշ պատճառ չունին բայց եթէ ժամանակէն յառաջ դուրսէն կամ չափէն աւելի ուտելիք ջամբելը : Տղայոց շաքուտեղ եւ շաք խմել տալը սխալ դրութիւն մըն է , եւ այն պէտք չէ նպատակ ունենալ , զի այսպէս ընելով խնդրուած արդիւնքին հակառակը կը պատահի : Ստնտուն անհամբեր լինելով որ ժամ յառաջ իր դիտելիքն ոյժ ստանայ , աճի եւ դեղատեսիլ լինի , առանց նորա ակուայներուն բուսնելուն սպասելու , այնպիսի ուտելիքներ կը տայ որ աղիքները չեն կարող մարսել , որով մանկիկը , փոխանակ բարգաւաճելու , կը հիւանդանայ եւ կը հիւծի (2) :

յազենալ նորա ստինքէն , կը հոգնի եւ կը քնանայ յուսահատ , իբր թէ բնութիւնն ուզէ սնունդին սնրաւականութիւնը բուսնով լրացնել :

(1) Արեւելքի մէջ այս կծիկներու մէջ կը դրուին հացի փոր , ծեծուած նուշի շաքար եւ այլն , որք անդական ոչ յատկութիւն եւ ոչ բաւականութիւնն ունին : Մանուկն անով կը լուէ շատ անգամ , ծիծ ուտել կարծելով բայց հարկ չէ ըսել որ բերանն 'ի զուր կը հոգնի եւ անդեան պակասութեան կը վատի քիչ ատենէն :

(2) Կը պատահի երբեմն որ կաթնաստնութեան միջոցին հարկ

307. 3. ԿԱԹՆՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԻՄԻԱՅՆ ԾԾԱԿՈՎ ԱՅՆ Է ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱԹՆՏՈՒՈՒԹԻՒՆ

Արհեստական կաթնտուռութիւնը կամ միմիայն ծը-
ծակով կաթ տալն յաջողելու համար, մեծ համբերու-
թիւն եւ մանրամասն զգուշութիւններ կը պահանջէ :
Կան խիստ ստիպողական այնպիսի պարադայներ ուր այս
միջոցով մանկան տածումը հարկ կը լինի : Մայր մը
միայն կարող է իր անձնուիրութեամբը պէտք եղած
հաստատամտութիւնն ունենալ եւ յաջողիլ այս պաշ-
տօնին մէջ որ այնքան փափուկ եւ այնքան տաղտկալի
գժուարութիւններով լի է : Որքան ծնողք յօժարամիտ
գտնուին, որքան պարադայներն յոյժ նպաստաւոր լի-
նին իրենց, արհեստական կաթնտուռութիւնը դժբաղ-
դաբար խիստ շատ անգամ չը յաջողիր : Սակայն եթէ
այս եղանակաւ սնուցանելն աւելի յաջողութիւն կը
գտնէ զիւղերը քան թէ քաղաքներու մէջ, պատճառն
այն է որ ոչ միայն զիւղերու մէջ մանկունք աւելի
կորովի են եւ չնչառութիւննին աւելի փրկ է ազատ օ-


կը լինի ստնտուն փոխել, և այս մեծ մտահոգութիւն կը պատ-
ճառէ ընտանեաց և կ'երկնչին թէ մի' գուցէ այդ փոփոխումը
փնտս բերէ տղուն : Կրնանք վստահացնել որ, նոր ստնտուն եթէ
պէտք եղած յատկութիւնները լիովին ունի այդ պաշտօնին
համար, որք յիշուած են այս տեղ, այդ փոփոխումէն զիեցիկին
փնտս չըզար բնաւ : Բայց տղան իր վարժած ստնտունէն բաժա-
նելն և ուրիշ վարժեցնելը միշտ փափուկ խնդիր մը լինելով,
պէտք է որ բանաւոր պատճառէ մը միայն հարկադրուած ծը-
նողք այդ որոշումը տան : Այդ պատճառներէն գլխաւորներն
են - 'ի բաց առեալ բարուց անպարկեշտութիւնն որ ստիպու-
ղական պատճառ մըն է միշտ - նորա ժառանգական կամ փո-
խադրական ախտի մը ենթակայ լինելուն հաստատութիւնը, որք
կաթնատունին ածանցուելու վտանգ կ'սպառնան, կաթին ոչ ա-
ռատ կամ ոչ կաղդուրիչ լինելն, յղութիւնը և ջղային ցնցական
ախտերն որք միշտ կաթին աղնուութիւնը կը խանգարեն :

1003
10337

զին մէջ, այլ մանաւանդ որ գիւղերու մէջ կովի կաթն,
- որ սովորաբար ուրիշ կենդանեաց կաթերէն նախա-
մեծար կը սեպուի արհեստական կաթնտուռութեան հա-
մար- աւելի ընտիր է եւ ամեն կողմ գրեթէ կը գտնուի
աժան գնով : Մատակ իշուն կամ այծին կաթն եւս
կրնայ գործածուիլ, բայց փորձով հաստատուեցաւ թէ
կովուն կաթն, ուրիշ կենդանիներուն կաթէն աւելի,
իր բաղադրութեամբը, կնոջ կաթին կը մօտենայ, այն-
պէս որ, կովուն կաթը կազմող տարրերն (պանիր եւ
կարագ), ամեն կաթերուն տարերաց քանակութեանցը
հաւասար լինելով, անոնցմէ պակաս ջուր եւ շաքար
կը պարունակէ, որով տեսակ մը կնոջ կաթ ըսել է ա-
ւելի թանձր եւ պակաս անուշ : Հարկ չէ յաւելցու-
նեմք որ զիեցիկին տրուած կովու կաթն, որքան կա-
րելի է, միշտ մի եւ նոյն կովունը պէտք է լինի եւ բո-
լորովին թարմ եղած ատենը տալու է : Եթէ ամեն այս
պայմաններն ընու կարելի չէ քաղաքներու մէջ, գո-
նէ աշխատելու է որ հնար եղածին չափ նոցա մօ-
տեցուի : Բարիղու մէջ միմիայն ծծակով նորածին մը
մեծցընելու փորձ ընելը, գրեթէ աներկբայաբար մա-
հու դատապարտել է զայն, եւ ինչպէս կը գրէր բժիշկ
մը վին սրտմտութեամբ, «Բարիղի մէջ ծծակի թոյլ-
տուութիւնն, որդեսպանութիւնը քաւել է» :

Ամառուան տաքերուն ատենը պէտք է կաթն ե-
փել որ չը թթուի : Ուրիշ որ եւ է պարագայի մէջ
հալել դեռ չէ որ եփուած լինէ : Բաւական է քիչ մը
տաքցընել զայն, շիշը եռացող ջուրի մէջ բռնելով քիչ
մը ատեն :

Արհեստական կաթնտուռութեան ժամանակ կաթն
երեք կերպով կրնայ տրուիլ : Ծծակով, ըմպանակով
եւ դրդալով : Վերջի երկու կերպերն առջինէն աւելի
անյարմար են : Կաթին մէջ յաւելցուած ջուրին քանա-



կութիւնը պէտք է պակսի քանի մանուկը մեծնայ : Առաջին երեք կամ չորս շաբաթներն, երկու երրորդ ջրով տալու է կաթն առանց սեբը Լրայէն առնելու : Հետեւեալ երկու ամիսներն (2րդ եւ 3րդ), կաթն ու ջուրը հաւասար չափով պէտք է լինին : Չորրորդ ամիսէն վերջը, մէկ քառորդ ջուրը բաւական է : Վերջապէս վեցերորդ ամիսէն սկսելով զուտ կամ գրեթէ զուտ տալու է կաթը :

Կաթնասունին օրը 12 ժամ է, առաւօտեան 7 էն կամ 8 էն սկսելով, ըստ եղանակին, (կէս օրէն 4 կամ 5 ժամ յառաջ) : Նոյն միջոցին երկու ժամը մէկ անգամ տալու է ծծակը եւ տրուած ժամանակը միայն պէտք է ջուրը յաւելցնել, այնուհետեւ քիչ մը պարզ շաքար եւ կամ լաւ եւս կաթի-շաքար դնելու է մէջը : Ըմպելիքը պէտք է դադը լինի, եւ այս դիւրին է մօրն ստուգել առաջին անգամ ինքը ծծելով : Գաղջութիւն տալու համար բաւական է քիչ մը տաք շաքար-ջուրի մէջ պաղ կաթ լեցունել, մինչեւ որ կնոջ կաթին ջերմութեանը գրեթէ հաւասարի, որ է շուրջ 37 աստիճան հարիւրաչափ :

Մ Մ Ա Կ

Տղայոց կաթ կերցնելու համար սովորաբար գործի մը կը գործածեն, որու ծծակ (hiberon-պէպուճ) անունը կը տան (1) : Սորա այլ եւ այլ տեսակները ծախու կը

(1) Կրկնութենէ չեմք երկնչեր յիշեցնելով դարձեալ որ ծծակով մանկանց տածումը դերծ չէ վտանգներէ, մինչեւ անգամ եթէ պէտք եղած գոլուլութիւնները չըզլանան : Թալկադէմ, Խողխտաւոր (serofuleux), ոսկրաթոյլ (rachitique), հիւճեալ տղայք, ըստ մեծի մասին, ծծակով սնածներն են, մանա-

գտնուին : Ատնոցմէ ամենէն լաւը, կամ աւելի ճիշդ խօսելով, ամենէն քիչ փաստաւորն այն է, որու չէնքը պարզ լինելով դիւրաւ կրնայ մաքուր պահուիլ : Պէտք է բոլորովին մերժել այն ծծակներն որոց բաղադրութեանը մէջ Գոուշու ըսուած (caoutchouc, Լուպէլ) խէժը կը գտնուի, որքան որ քիչ ալ լինի : Այն ծծակներն որոնց ծայրն այդ խէժովն շինուած են կամ խիժէ խողովակ մը ունին, խիստ անպատշաճ են, վասն զի .

Ա. Իրենց բաղադրութեանը մէջ գտնուած տեսակ մը նիւթը տղուն ծանր հիւանդութեանց պատճառ կը լինի (1) :

Բ. Նոցա մաքրելը դժուար է, եւ այս մեծ անպատեւ հութիւն մըն է, քանզի եթէ ծծակը խնամօք չը մաքրուի, մէջի կաթը խիստ դիւրութեամբ կը թթուի :

Գ. Մօրն հսկողութիւնը կը թուլացնէ, վասն զի ծծակն օրօրոցին մէջ տղուն քովիկը դնելով, կը թողու որ նա ամբողջ օրը ծծէ, թէեւ երբեմն մէջը պարապ լինի :

Եթէ մէկ անգամուն մանուկը ծծակին մէջ եղածն ամբողջ չէ կարող սպառել, պէտք է մնացորդ կաթը թափել եւ հետեւեալ անգամուն կրկին նոր կաթ լեցնել : Պէտք է որ մայրն ինչ էր քեռու ծծակն եւ նոյն

ւանդ առջի հինգ ամիսներն : Այնպիսի արգելքներ միայն, եթէ կան, կրնան արդարացունել զայս, ինչպէս են մօրն անբուժելի մէկ հիւանդութիւնը, շարաչար աղքատութիւն եւնի կը յաւելումը որ 5րդ ամիսէն վերջը, 'ի ստիպել հարկին, եթէ ծծակ արուի, առջի ամիսներուն չափ փաստաւոր չըկարէ լինել վասն զի մանուկն ոչ միայն մէկ քիչ ամած է, այլ և նորա ըստամբան աւելի դիւրաւ կրնայ մարտել օտար կաթ եւ թէթեւ ուտելիքներ :

(1) Գոուշու խէժերու կարծրութիւն տալու համար (caoutchouc vulcanisé) բացի ծծուկէն, ուրիշ փաստկար բաղադրութիւններ եւս կը գործածուին :

պահուն մի եւ նոյն եռանդն 'ի գործ դնէ, քան ինքն իր ստինքէն կաթ տալու որ լինէր:

Երբ ծծակին գործածութիւնը կ'աւարտի, պէտք է նորա բոլոր մասունքներն իրարմէ դատել եւ յատուկ վրձինով մը խնամօք մաքրելէ ետեւ, մաքուր ջուրի մէջ ձգուած պահել եւ յաճախ փոխել այն ջուրը:

Մայրը կրնայ կաթին քանակութիւնն յաւելցնել եւ ջուրինը պակսեցնել երբ կը տեսնէ որ, անընդհատ քանի մը օր, կաթնասունը ծծակին մէջ եղած կաթը մինչեւ վերջին կաթիլը կը սպառէ: Աեցրորդ ամսոյն մօտ օրը 800 էն 1000 կուամ (1) զուտ կաթ կրնայ տրուել: Այժի կաթը կովու կաթէն աւելի անդաւարար եւ կազգութիւն լինելով, անոր մէջ աւելի ջուր խառնելու է որպէս զի աւելի դիւրութեամբ մարսի:

Չը մոռնամք նաեւ յիշելու թէ դժուար է կաթին անդարար զօրութիւնը տղուն տարիքին հետ համեմատել, դժուար է նաեւ կաթ տրուած ժամանակը շարունակ մի եւ նոյն աստիճան տաքութեան մէջ պահել զայն: Պէտք է դարձեալ որ մանուկը քիչ կամ շատ ոյժ տայ կաթը շրթունքներուն հասցունելու համար: Յաւելցունելք վերջապէս որ խիստ դժուարին է հաստատել թէ կաթը խարդախուած չէ (2):

(1) Ծուրջ 520 տիրէմ:

(2) Ամեն մեծ քաղաքներու մէջ, ուր աչտուրջ հսկողութիւն չըկայ, կաթը ստեպ խարդախեալ է: Այս բանը կանխապէս գիտնալով, եթէ մանկան վրայ տկարութեան նշան մը տեսնուի, նախ իրեն ծծած կաթին որպիսութեանը վրայ պէտք է դարձնէ մարդ իր ուշադրութիւնը:

307. 4. ՍՏԻՆՔԷ ԵՒ ԾԾԱԿԷ ԽԱՌՆ

ԿԱԹՆՏՈՒՈՒԹԻՒՆ

Այս կերպ կաթնատուութենէ կ'իմացուի, մօրը կամ դայեակին կաթին հետ, միանգամայն ծծակով կաթ տալն:

Կաթնատուութեան այս եղանակը, որ շատ տարածուած է եւ որու բաղմաթիւ պատճառները քիչ մը վերջը պիտի նշանակեմք, խիստ յաջող հետեւութիւններ կրնայ ընծայել եթէ խելացութեամբ եւ արդարապէս գործածուի, այսինքն եթէ հաւասար քանակութեամբ եւ յաջորդաբար տրուին կնոջ եւ կովու կաթերն:

Երբ ծնողք հարկադրուած են խառն կաթնատուութեան դիմել, պէտք է զայն որքան կարելի է կանուխ սկսիլ, ապա թէ ոչ, մանուկն ստինքին սովորելով, դժուարութեամբ կ'առնէ ծծակն:

Այն կանայք՝ որոց առողջութիւնը տկար է կամ փափուկ, խիստ քիչ կաթ ունին երբեմն իրենց մանկանց մտունդն ըստ բաւականի մատակարարելու համար: Ոմանց եւս պտկունքն լաւ ձեւակերպեալ չըլլալով, դիեցիկը ծծելէ կը հոգնի եւ քիչ ատենէ վերջը կը քարշի անտի: Ե՛ծակն այն ատեն կրնայ այդ թերութիւնը ընուլ:

Վերջապէս ընկերական այնպիսի վիճակներ կան, ուր մայրն իր զբաղմանց պատճառաւ եւ ամբողջ օրը տունէն հեռի մնալով, հարկադրուած է ծծակ տալ իր կաթնատուին: Բայց այն կանայք որք գործարաններու մէջ կ'աշխատին, լաւ կ'ընեն եթէ Մայր անուն բարեգործական եւ պիտանի հաստատութեանց դիմեն, որոց, չնչին փոխարինութեամբ մը, կին մը կրնայ ապահով կերպով իր տղեկը յանձնել: Այն տեղ իր բացակայ ժամերն, ընտիր կաթով կը սնուցանեն զայն եւ

ուր ինքն ալ, եթէ ցերեկ ատեն պարապ ժամանակ ունենայ, կրնայ երթալ ու ծիծ տալ :

Այն շատակեր տղայք որոց միջակ քանակութեամբ կաթ ունեցող ստնտու մը չըբաւեր, պէտք ունին առաւօտ եւ իրիկուն ծծակով եւս կաթ ուտել որ չը մնասուին : Բայց եթէ խառն կաթնտուութեան պատրուակաւ, իբր ձեւ մը, տղան մօրն ստինքին կը մօտեցընեն, (ուր ոչինչ կամ քիչ մը բան կը գտնէ ուտելու), ու թէ որ այս սուտ կաթնտուութենէն վերջը ծծակ մը ամբողջ լեցուն կը տան նորա որ ծծէ, այն ատեն այս եղանակ դիւցման հետեւանքներէն երկնչելու է, վասն զի լոկ ծծակով կաթ տալու չափ վտանգաւոր է : Մէկ բառով, խառն կաթնտուութեան ատեն, ծծակը մօրն ստինքին օժանդակը պէտք է լինի, ու թէ որ կանոնաւոր կերպով եւ յաջողաբար կարելի չէ ստինքն եւ ծծակը տալ, որ լաւագոյն կերպն է, այն ժամանակ այնպէս ընելու է որ դիւցմանց թիւը ծծակով կաթ տալու թիւէն պակաս չըլինի, նախորդ յօդուածին մէջ նշանակուած հրահանգաց համեմատ վարուելով :

ՅՕԴ. Ե. ԿԱԹՆՏՈՒՈՒԹԻՒՆ ԷՊ ԿԵՆԴԱՆԻՒ ՄԸ ՍՏԻՆՔԷՆ (ԱՅԾ)

Կաթնտուութեան մէկ կերպն ալ [կայ վերջապէս որ բազմաթիւ կողմնակիցներ ունի, այն է այժէ կաթնտուութիւնն, որ ամեն կենդանեաց էգէն աւելի ընդունակ է այս բանին :

Այս եղանակաւ մանկտին սնուցանելը, բազդատաբար ամենէն դիւրագիւնը լինելու առաւելութիւնն ունենալէ զատ, երբեմն ստիպողական եւս է, զոր օրինակ երբ հարկ կը լինի, մասնաւոր պարագայից մէջ, հիւանդ տղայոց դեղորայք տալ որ նորա կազմական

ախտաւոր վիճակը բարւոքեն : Այն ատեն ստիպուած են այժին ստնտուութեանը դիմել : (1)

Մեծ քաղաքներու կեդրոնները գրեթէ անկարելի է կաթնտու այժ մը պահել, բայց գիւղերու նաեւ քաղաքաց արուարձաններու մէջ այնպէս չէ : Երբ կաթնտուութեան այս եղանակը տանը բժշկին հաւանութիւնն ստացած է, կը խրատեմք որ կանոնաւոր կերպով կաթ տալու պայմաններուն հետեւին ճշդութեամբ : Շուրջ ամեն երկու ժամը մէկ անգամ այժը մանկան սենեակը կը բերեն, ստուար գորգի մը վրայ կը պառկեցնեն զայն եւ յետոյ մանուկը կենդանւոյն փորին երկարութեամբ փոքր բարձի մը վրայ դնելով, այժին պտուկը նորա բերանը կը դնեն :

Վերջին ծայր մաքրութիւն պահել հարկ լինելով, պէտք է, ամեն կաթ տալէն առաջ, կենդանւոյն ստինքը լուանալ գաղջ ջուրով : Երբ մանուկն իրեն բաւակաճութեանը չափ կաթ ծծեց, այժը իւր ախտը կը դարձունեն եւ կամ արածելու կը տանին քիչ մը ատեն : Այս ստնտուն ընտիր ուտելիքով պէտք է մանի եւ ամեն օր օդ առնու :

Բարիգու Օդավարժութեան պարտէզը քննելու ըզբաղեցաւ թէ որ տեսակ այժերն ամենէն ընտիր կաթը կը տան տղայոց սննդեանն յարմար, եւ ակներեւ ցոյց տուաւ թէ Մօնտօսի այժն ամեն տեսակ կատարելութիւնն ունի այս մասին : Վերին Եգիպտոսէն եւս այ-

(1) Վերջին ժամանակներս բժշկաց փորձերն հաստատեցին թէ, տղայոց ինչ ինչ կազմական հիւանդութեանց դարման տանելու համար, փոխանակ ուղղակի նորա գեղ խմցնելու, աւելի դիւրին և օգտակար է նոյն գեղը տալ այն այժին կամ կովուն որուն կաթովն կը սնանի մանուկը : Գեղերուն ազդումսերն կենդանիին կաթին մէջ անցնելով, մանուկն, սնուղղակի կերպով և յաջողապէս կը գտնէ իւր ախտին դարմանն :

ծեր բերել տուաւ եւ բազմացուց : Այս վերջիններն տեսքով գեղեցիկ չեն թէպէտ, բայց մեծ քանակութեամբ եւ աղնիւ կաթ կը տան : Բարիզ բերուած վերջին այծը Թօկընպուրկի (Ձուիցերի) այծն է : Ամեն տարի այս վերջիններէն բազմաթիւ այծեր բերել կը տայ նոյն պարտիզին տնօրինութիւնը, որք զիւրու-թեամբ 60 էն 100 Փրանգ կը ծախուին :

Այծի կաթին աղնուութիւնը նորա տրուած ուտե-լիքէն կախեալ է : Ընդհանրապէս թոյլ տալու չէ որ լեղուահամ արմատներ ուտէ : Սակայն ստեպլինը լաւ ուտելիք մըն է ինչպէս նաեւ չոր առաւոյտը (luzerne, էճճճ) եւ լազուտի (maïs ջըւըր պո-ղոյն), բլիթները (tourteaux) : Սոքա բաւ են այծը լաւ անուցանելու համար : Կանանչ եւ թարմ ուտելիքները պէտք է լաւ ընտրուին եւ ուշիմութեամբ գործածուին որպէս զի այծին կաթին աղնուութիւնը չ'ապականի :

ԳԼՈՒԽ Գ.

ՍՏՈՒԳԱՏԵՍՈՒԹԻՒՆ (1) ՏՂԱՅՈՑ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ,

ԿՇՌՈՒՄՔ

Տղու մը քաջառողջութեան նշաններն հետեւեալքն են : Միտերն ամուր, մարթը գունաւոր, քունը հան-գարտ, ախորժակը միօրինակ, շարժմանցը մէջ ժիր, աչերը փայլուն, մէզն առատ, անդոյն եւ գրեթէ ան-հօտ, կարիքը չափաւորապէս թանձր, դեղնագոյն, կիսեփ եւ խառնուած հաւկթի երեւոյթով առանց փը-

(1) Contrôle.

տրի (grumeaux), առանց մածուցիկ նիւթերու (vis-cosités) եւ ոչ դարչահոտ : Բայց տղայոց առողջու-թիւնն ստորգելու համար ամենէն լաւ միջոցն, հետը-հետէ եւ կանոնաւոր կերպով զայն կշռելն է, վասն զի աչքը կրնայ սխալիլ եւ նոցա արտաքին երեւոյթէն խաբուիլ : Տղան չը խօսիր, բայց կշիռը կը խօսի եւ իմաց կը տայ թէ նորածինը կը բարգաւաճի, կայսն կը մնայ թէ կը հիւծի :

Նախապաշարուած մը կայ որ նորածինները կշռելը չարաբաղդ կերպով կ'աղդէ նոցա վրայ, բայց կը խրա-տեմք մայրերն որ, առանց այդ անտեղի կարծիքին ուշ դնելու, այս ամենապարզ եղանակաւ քննեն իրենց կաթնասունին ինչպէս աճին :

Ահաւասիկ այս մասին իրենց իբրեւ առաջնորդ, պէտք եղած գիտելիքներն : Տղայ մը ծնած վայրկեա-նին, միջին ծանրութեամբ, երեքուկէս հազարակուամ կը կշռէ (1) : Առջի երեք կամ չորս օրերն, իր սկզբ-նական ծանրութիւնը կը կորանցունէ, յետոյ եօթերորդ օրն իր ծննդեան ժամուն ունեցած ծանրութիւնը դարձեալ կը գտնէ : Մինչեւ հինգերորդ ամիսն, օրը 15 էն 35 կուամ կ'աճի : Այս պահուն պէտք է որ իր սկզբնական ծանրութեան կրկինը կշռէ :

Հինգերորդ ամիսէն յետոյ միջակ հաշուով օրը 10 կամ 15 կուամ միայն կը ծանրանայ : Երբ 16 կամ 18 ամսոյ կը հասնի տղան, իր ծանրութիւնը ֆինգերորդ ամսոյն ունեցած ծանրութեանը կրկինը կը լինի :

Երբ տղուն կշիռն այս միջին թիւերէն շատ կը հե-ռանայ, պէտք է բժշկին իմաց տալ :

Կշռումը պէտք է ամեն ութ օր կատարուի առջի հինգ ամիսներն, յետոյ ամեն տասն եւ հինգ օրն եւ

(2) Շուրջ 2 օրայ 500 տիրէմ :

վերջապէս ամեն ամիս : Հարկ չէ յատուկ շինուած գործի մը ունենալ : Ինչ որ տանը մէջ կը գտնուի կը յարմարի, զոր օրինակ նպար կշռելու մեծ կշիռ մը : Նժարներէն միոյն վրայ կողով մը կամ փոքրիկ տախտակ մը կը դնեն եւ մանուկն իր խանձարթօքը պատած վրան կը պառկեցունեն : Կշռումն աւարտելէն զինի նորածինին հագուստները կը փոխեն եւ նոքա եւս կըշռելով նոյն կողովին կամ տախտակին հետ, մարմնոյն ճիշդ ծանրութիւնը կը գտնեն կշռոց տարբերութենէն :

Նոյնպէս կշռոց միջոցաւ է որ կրնայ ստուգուիլ թէ ստնտուն բաւական կաթ ունի մանուկը դարգացնելու համար : Առջի հինգ աւուրց մէջ ամեն անգամուն նորածինն աստիճանաբար 5 էն 50 կուամ կաթ կը ծծէ : Առաջին շաբաթը լրացնելէն զինի, մինչեւ չորրորդ աւիւրը, միջակ քանակութեամբ 60 էն 80 կուամ է կերած կաթը : Հինգերորդէն մինչեւ իններորդ ամիսներն 100 էն 130 կուամ է : Ըսել է մանուկը 24 ժամուան մէջ, ութն կամ տասն անգամ կաթ ուտելով, ընդամենը 300 էն 800 կուամ կաթ կ'ուտէ հինգ ամիս, յետոյ 1000 էն 1200 կուամ հետեւեալ ամիսներն : Այս միջոցաւ կարելի է քննուիլ, թէ ամեն անգամ ստնտուն ինչ քանակութեամբ կաթ կարող է տալ :

Որպէս զի կշռումն եղրակացուցիչ արդիւնք մը տայ, պէտք է առաւօտուն տղան զգեստները փոխած ժամանակը կշռել, միգելէն եւ կարիքն արտաքսելէն զինի եւ կաթ ուտելէն առաջ : Գարձեալ, մանկան նոյն ժամուն ունեցած ծանրութիւնը չէ որ նկատողութեան պէտք է առնուի, այլ հետզհետէ նշանակուած ծանրութեանց բաղդատութիւնը, զի այն միայն ճշգրիտ եւ միօրինակ կերպով ցոյց կը տայ նորա աճումն եւ հետեւաբար նորա առողջութեան գոհացուցիչ վիճակը :

ԳԼՈՒԽ Դ.

ԿԱԹՆԱՀ ԱՏՈՒԹԻՒՆ

Կաթնահատութիւնն (sevrage), մինչեւ անգամ լաւագոյն հանգամանաց մէջ գտնուող մանկանց համար, միշտ փափուկ խնդիր մըն է : Կաթէ կտրելու համար յարմարագոյն հասակին յատկապէս որոշումը խիստ փոփոխական է ազգային կամ տեղական սովորութեանց համեմատ : Կան այնպիսի մանկունք որք կրնան մէկ տարեկան լինելուն, եւ անկէ իսկ առաջ, կաթէ կտրուիլ, մինչդեռ կան այնպիսիք որոց համար տասն եւ ութն ամիս սպասելու է : Այս ժամանակի տարբերութեանց պատճառներն երեք տեսակ են : Ոմանք մօրմէն կամ ստնտունէն կախեալ են, երկրորդ կաթնատունէն, իսկ վերջիններն կաթնահատութեան որպիսի հանգամանաց մէջ կատարուելէն :

Ընդհանուր կանոնն այն է, որ մանուկը կաթէ կտրելու համար սպասելու է որ տասներկու ակուայ հանած ըլլայ : Բայց երբ մայրը կ'սկսի նուազիլ եւ մանուկն եւս իր առաջին ութն ակուայները հանած է, կրնայ, 'ի ստիպել հարկին, կաթէ կտրուիլ : Չորս առաջին մեծ ակուայներն աւելի վերջը բուսնելով, նոյն միջոցին դիեցիկը տասն ամսու կամ մէկ տարեկան եղած կը լինի : Իսկ եթէ ուրիշ արգելք մը չկայ բնուաին, կաթնահատութեան համար յարմարագոյն ժամանակն է մեծ ակուայներուն եւ չնիկ (canine) կամ աչքի ակուայներուն բուսնելու միջոցին մէջ : Այս վերջինները տասնեւութերորդէն քսաներորդ ամսոց աւտենները կը ծլին : Նոյն միջոցն է ուրեմն որ մանուկը դրեթէ կատարեալ հանգիստ ունենալով, կաթնահատութեան համար ճիշդ պատեհ ժամանակն է :

Ակուայներուն բուսնիլը շատ անգամ անկանոն է, ինչպէս փոփոխական են նաեւ մօրն առողջութեանն որպիսութիւնը եւ կամ ուրիշ անակնկալ պարագայներն: Աստի կրնայ մակաբերուիլ որ բացարձակապէս բան մը չեմք կարող որոշել այս մասին: Սակայն կայ նաեւ ուրիշ օրէնք մը որ մտնալու չէ, այն է թէ, տղայ մը պէտք չէ կաթէ կտրուի եթէ իր ակուայներուն թիւն անդոյգ է: Ահաւասիկ այս բանին պատճառը: Ակուայները զոյգ կը բուսնին եւ բուսած ատենին շատ անգամ ստամոքսի եւ որովայնի խանգարմանց պատճառ կը լինին: Արդ՝ եթէ անդոյգ են տղու մը ակուայները, կը վախցուի որ, նոր տեսակ ուտելիք մը ուտելով, այդ խանգարմունքը սաստկանայ երբ այն ուշ մնացած ակուայն սկսի երեւան գալ:

Գարձեալ պէտք է որ մանուկ մը քաջառողջ լինի երբ կ'սկսի կաթէն կտրուիլ: Գարունն եւ ձմեռն ամենէն յարմար եղանակներն են եթէ կրնան ընտրուիլ:

Աստիճանաբար եւ ծանր ծանր կտրելը նախապատիւ է քան թէ յանկարծակի կտրելն, այսինքն քսան եւ չորս ժամուան մէջ: (1)

Կաթնահատութեան առջի հինգ կամ վեց ամիսներն որքան կտրելի է կաթով կամ արգանակով ա-

(1) Նախ կաթնասունին գիշերուան կաթ ուտելը դադարեցնելու է եւ ուրիշ ուտելիքի վարժեցնելու է օրուան տասներկու ժամը, կաթ տալու միջոցներն հետզհետեւ իրարմէ հեռացնելով: 15 կամ 20 օրէն կամ մէկ ամիսէն վերջը բոլորովին մերժելու է ստինքը կամ ծծակն առանց նորա սղաղակներուն ուշ գնելու:

Երբեմն չանստցող տղայոց համար լեզի նիւթեր կը քսին պակուսքին վրայ, որոց համն առնելէն վերջը անդառնալի կերպով կը խորշի մանուկն անտի: Այս լեզի նիւթերը կրնան գործածուիլ եթէ տղուն առողջութեանը չեն վնասեր բնու:

պուր տալու է, նաեւ թարմ հաւկիթ խաշած եւ երբեմն ալ խիւս: Իւզոտ արդանակը լուծումն ունեցող տղայոց չը յարմարիր: Կատարեալ ուտելիքն, այն է միս եւ զսնազան բանջարեղէնք, միմիայն առաջին ատամնաւորութիւնն (dentition) աւարտելէն վերջը կը յարմարի, այսինքն երբ քսան ակուայները բուսած են:

Առատ կաթ, առատ ապուր, շաքարէն աւելի աղ, խիստ քիչ գինի, ասոնք են անա որ նոր կաթէ կըտուած տղու մը ուտելիքներուն հիմն պէտք է կազմեն:

ԳԼՈՒԽ Ե.

ԱՏԱՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս վերը տեսանք, անդեան եւ կաթնահատութեան խնդիրներն այնքան սերտ կցորդութիւն ունին մանկան ատամնաւորութեանն հետ, որ այս վերջինին վրայ քանի մը բառ հարկ է խօսիմք:

Բնական հանգամանաց մէջ այս եղելութիւնն հետեւեալ կերպով կը կատարի: Հինգերորդ ամսոյն մօտ լինտրերուն եղերքները կ'սկսին ուռիլ եւ լայնալ, եւ լորձունքն աւելի առատ կը հոսէ: Եօթերորդ ամսոյն վերջերը տղուն քունն անհանգիստ է, գոյնը կը դեղնի եւ տխուր կ'երեւի: Լինտրերը կարմիր եւ ուռած են եւ տղան շարունակ ձեռքերն անոնց վրայ կը տանի: Երբեմն թեթեւ լուծումն եւս կ'ունենայ:

Մէկ կամ երկու շաբաթէ վերջն, եւ քանի մը աւուր միջոցի մէջ, առաջի երկու ակուայներուն հայելիք կը տեսնուի: Այս նշանները խմբովին կը կրկնուին նախական ատամնաւորութեան ամեն մէկ չրջանի ատեն:

Նախնական ակռայներն ընդհանրապէս հետեւեալ կարգաւ կը բուսնին: Եօթներորդէն ութերորդ ամիսները, մէկ երկու օր տարբերութեամբ, վարի երկու միջին հաստնոց (incisive) ակռայները կ'երեւին: Աւելցաբաթ կամ երկու ամիս վերջն, ութնէն տասն եւ հինգ օր միջոցի մէջ, վերի երկու միջին հատանոցները: Տասնէն տասներկուերորդ ամիսները, վերի եւ վարի ծնօտներուն վրայ, եւ արդէն բուսած ակռայներուն երկու կողմերն, ուրիշ մէկ մէկ հատանոց կ'երևնն: Այսպէսով հատանոցներուն թիւն ութնի կը հասնի որ ըսել է կ'ամբողջանայ: Տասներկուքէն տասն եւ չորսերորդ ամիսներն, եւ միեւնոյն կարգաւ, թէ վերն եւ թէ վարը, չորս փոքր աղօրիքներն (petites molaires) կ'երևնն, այնպէս որ այս վերջիններուն եւ հատանոց ակռայներուն մէջ պարապ տեղ մը կը մնայ:

Այսպէսով տղուն ակռայները տասներկու հատի կը հասնին: Շուրջ չորս ամիս հանդիստէ վերջը, այսինքն տասներեօթերորդէն քսաներորդ ամիսներն, երկու շնիկ ակռայներ (canine) կը դան երկու ծնոտին վրայ պարապ մնացած փոքր տեղը լեցնել: Աւելցապէս քրտաներորդէն մինչեւ քսան եւ չորսերորդ ամիսներն եւ երբեմն աւելի ուշ, ամեն մէկ ծնոտին վրայ երկու «դըբէ» եւս կը բուսնին, որով նախնական ատամնաւորութեան քսան ակռայներն լրացած կը լինին:

Սովորաբար մանուկն ակռայ հանած ատեն բաւական է միայն նորա ուտելիքին վրայ հսկել, մաքուր օդ տալ, աւաղանի (bain, պանեօ) մէջ դնել եւ կակուղ խաղալիք մը տալ անոր — զոր օրինակ տուղտի արմատի (racine de guimauve, կեւլաբէժ) կտոր մը որ լինտրերուն վրայ սեղմէ: Հարկ չէ ըսել որ առանց բժշկի հաճութեան ոչ մէկ դեղ պէտք չէ տալ մանկան, մանաւանդ մէկոսի (pavot, Խաշիխաշ) շարաք կամ ուրիշ

որ եւ իցէ թմբրեցուցիչ դեղեր, մանուկն հանդարտեցնելու պատճառանքով (1):

ԳԼՈՒԽ Զ .

ՀԱՆԳԵՐՁՔ

Հանդերձք պէտք է մանուկը ցրտին դէմ պաշտպանեն, բայց զգուշանալու է որ նորա ազատօրէն շարժելուն արգելք չը լինին: Հարկ է ուրեմն որ սղումը զգեստներն հետեւեալ չորս հանդամանքներն ունենան: Կակղութիւն, թեթեւութիւն, ըստ բաւականի լայնութիւն եւ չափաւորապէս տաք պահող:

Հին ատեններուն գործածուած պատատը (maillot, Կոնֆոտ) պէտք է մէկ կողմ թողուլ որ մանկան մարմինը կը սեղմէ եւ կատարեալ անշարժութեան կը դատապարտէ զայն: Այդ կերպ մէկ հագուստ մը տղուն աճաման արգելք է եւ նորա առողջութեանը վնասաւոր (2):

(1) Տղայք, ատամնաւորութեան ժամանակ, շատ տեսակ հեւանդութեանց կրնան հանդիպիլ թէպէտ, բայց մեծ սխալութեք է ըմբռնելն, թէ նոյն միջոցին նոցա «ձ» զգացածն, «ձ» նշաններն, ակռայ հանելէն կը պատճառին եւ հետեւաբար անփնտ են: Այս բացարձակ գաղափարով անփոյթ մնալն ցաւալի հետեւանքներէ ազատ չէ երբեմն:

(2) Այս պատուէրը արեւելցւոց մանաւանդ պէտք է տրուի, որք տակաւին նորածինին մարմինը, թէ օրօրոցին մէջ եւ թէ անտի դուրս, անգթաբար սեղմելու բարբարոս սովորութիւնը կը պահեն: Այսպէս ընելով ապագային մէջ նորա ստանալիք վայելչաձեւութիւնն ո՛չ միայն բոլորովին անտեղի յոյս մըն է, այլ եւ մեծ մասամբ արեւելքի քաղաքացւոց արեւմտեաններէն պակաս գեղահասակ լինելուն գլխաւոր պատճառներէն

Գուցէ սորա հակառակ ծայրահեղութիւն մըն է Անգղիական դրութեամբ տղայք հագցունելն, որ առաջինին անպատեհութիւնները չունի թէպէտ, բայց պակասութենէ եւս զուրկ չէ :

Անգղիոյ մէջ մանուկը ծնածին պէս, փոքր չըջազգեստ մը կը հագցունեն որ բաց ու արձակ կը ձգէ նորա սրունքներն, որով նորածինը մրսելով, ցուրտէ յառաջ եկած ամեն հիւանդութեանց կրնայ ենթարկիլ : Այս անպատեհութենէն զգուշանալու համար հարկ կը լինի որ խիստ լաւ տաքցած բնակարանի մը մէջ պահուի մանուկն : Արդ՝ այս կերպով զայն պահելով կարելի չէ ըստ բաւականի նորա ոյժ եւ կայտառութիւն տալ : Հարկ է ուրեմն երկու ծայրայեղ կէտերէն միանգամայն զգուշանալ եւ այս երկու դրութեանց ոչ մին եւ ոչ միւսն ընդունիլ իբրեւ լաւագոյն :

Ահաւասիկ զգեստից այն մասերն որք մեզ պիտանի կը թուին :

Ա. Ծալլուած լաթ մը որ պորտին վրայ պէտք է դնել ու թողուլ մինչեւ որ լյնի այն, լարը (cordon) դէպի ձախ կողմը բռնելով : Այդ լաթին վրայէն կը տաւէ կամ ասուեղէն (flanelle) մանեւարով մը (bande) պէտք է չըջագօտել :

Բ. Կտաւէ շապիկ մը օձիքով եւ սահուն գօտիով մը, որ որովայնին վարի մասէն աւելի երկայն պէտք չէ լինի եւ որու թեւերը պէտք է մինչեւ դաստակներն իջնան :

Գ. Կտաւէ կամ բամպակէ քառակուսի կամ եռան-

մին է : Նորածինի մը փափուկ եւ դիւրակոր անդամները ձորձապատ կաշկանդելն ոչ կազմագիտութեան, ոչ բանականութեան եւ ոչ մտքգիւթեան համաձայն է, արդիւնքն հիմնովին ոչինչ, իսկ քնասները բաղմամբիւ :

կիւնի շոր մը (couche) որ մէջքէն սկսելով մարմնոյն վարի մասունքն եւ մինչեւ ոտքերը կը չըջապատէ, սրունքներն իրարմէ զատելով : Եթէ այս շորը եռանկիւնի է, անկիւններէն մին սրունքներուն մէջէն անցունելով վեր առնելու է եւ միւս անկիւններուն հետ կըցելու է անգղիական գնտասեղով մը :

Դ. Բուրդէ փոքր երկու թեւանոց, որք ետեւի կողմէն կը կապուին եւ մինչեւ ձեռքերը կը ծածկեն :

Ե. Բուրդէ քառակուսի խանձարուր մը (lange), որ զմանուկն պէտք է չըջապատէ թեւերուն տակէն սկսելով, առանց մինչեւ անութիւններն ելնելու : Ձեռքերը պէտք է անտի դուրս մնան : Այս խանձարուրը բաւական սեղմուած պէտք է լինի որ կարենան մանկիկը զրկած բռնել, բայց ոչ այնքան սեղմ որ նորա շնչառութիւնը փոքր ինչ եւս արգիլէ : Սա, ոտքերուն տակէն ծալլուելով, ետեւի կողմը պէտք է կապուի, բայց պէտք չէ երբէք որ տղուն ոտքերուն ազատօրէն շարժանոյն արգելք լինի :

Զ. Գլխին վրայ կտաւէ պարզ գտակ մը :

Ահաւասիկ ընդհանուր կերպով նորածինի մը պէտք էր զած զգեստները մինչեւ երկու ամիս :

Երկու ամիսէն վերջը զգեստներն հետեւեալ փոփոխութիւնները կրելու են :

Ա. Շապիկն աւելի երկար պէտք է լինի :

Բ. Բուրդէ դուրպաներ հաղցնելու է մինչեւ ծունկերն, իսկ ոտքերուն հիւսած բուրդէ ամաններ :

Գ. Շորն եռանկիւնի ձեւն առնելու է եւ նորա մէկ անկիւնը, սրունքներուն մէջ տեղէն անցունելով, փորին վրայ հաստատելու է :

Դ. Կտաւէ կամ բուրդէ վարտիք մը շորին ձեւովն եւ միւսնոյն կերպով հաղուցած, որ փոքր բայց խիստ լայն անդրավարտիքի մը ձեւ կ'առնու, եթէ մէկ քանի կոճակներով հաստատուի :

Ե. Առջի թեւնոցները գործածելու է, բայց բուրդէ կիսազգեստ մը (jupon) յաւելցնելու է, մէջքէն սկսելով մինչեւ ոտքերն երկայն :

Զ. Վերջապէս, այս ամենուն վրայէն, երկայն եւ ամբողջ մարմինը ծածկող շրջազգեստ մը (robe), լայն թեւերով :

Պէտք չէ երբէք սովորական գնտասեղներ գործածել : Անգղիական գնտասեղները տղան խայթելու վրտանդէն աւելի ապահովեալ են, բայց ուրբան կարելի է նոցա տեղ կապեր եւ կոճակներ պէտք է գործածել :

Քիչ մը ատենէն վերջը տղուն ոտքերուն աւելի ազատութիւն տալու համար, կտաւէ փոքր լանջնոց մը (corset) գնելու է ետեւէն կապուած, եւ որուն բուրտիքը կոճակներ կապուած պէտք է լինին, որպէս զի չորը, խանձարուրը եւ կիսազգեստը վրան կոճկուին :

Այն ինչ մանուկը կ'սկսի քայլելու փորձ ընել, նաեւ չորս ոտքի վրայ, դարձեալ զգեստներուն ձեւը փոխելու է : Պէտք է կիսազգեստն աւելի կարճ ընել ինչպէս նաեւ շրջազգեստը : Փոքրիկ եւ նեղ կոշիկներ եւս հազցունելու է որ ոտքերը գրկեն : Պէտք չէ մտնալ որ նորածինը, մանաւանդ առջի ամիսները, շատ տաք մնալու պէտք ունի, եւ սակայն հարկ է որ նորա մարմինը շրջապատող օդը նորոգի միշտ : Այս պայմանները բուրդէ եւ կտաւէ կակուղ հանդերձները լիապէս կը կատարեն :

Այս եղանակաւ շինուած զգեստները դիւրին են հազցունել : Ամեն անգամ որ զգեստներուն մէկ մասը խոնաւցած կամ աղտոտած է, պէտք է դայն մայրը փոխէ : Ամեն տարիքի մէջ մաքրութիւնն առողջութեան կարեւոր պայմաններէն մին է, բայց նորածինին համար անհրաժեշտ է : Խանձարուրն եւ ուրիշ զգեստները պէտք է խիստ լաւ լուացուին եւ ապա գործածուին :

ՄԱՐՄՆԱԿԱՆ ԽՆԱՄՔ

Մանկան ամբողջ մարմինը գոնէ օրը մէկ անգամ պէտք է լուանալ : Այս լուացումը պէտք է կրակի մօտ լինի, սպունգով մը եւ քաղջ ջուրով : Պէտք է մանաւորապէս տղուն ծննդական անդամներուն կողմը լուանալ : Լուացումը հարկ է արագութեամբ կատարի, յորմէ հետէ լաւ մը չորցունելու եւ նշայ (amidon — նէշտար) կամ լաւ եւս փայտի-փուտ (lycopode) ցանելու է մարմնոյն վրայ :

Օդատակար է նմանապէս շարաթը մէկ կամ երկու անգամ մանկան բոլոր մարմինը յաւազան դնել, չորս կամ հինգ վայրկեան տեւողութեամբ : Զուրին ջերմութիւնն ՅՁ աստիճան հարիւրաչափէն աւելի լինելու չէ : Զուրն այսպէսով մորթէն արտաթորեալ հիւթերը վրայէն հանելով, մարմնոյն ամեն պաշտօններն աւելի կը զօրացունէ, անդամոց դիւրաշարժութիւն կը տայ, արտաքսումները կը դիւրացնէ, ջղային գրգռութիւնը կը հանդարտեցնէ եւ ընդհանուր հանգստութիւն եւ քուն կը պարզեւէ : Աւազան մտցնելն օրուան ամեն ժամուն կարելի է, բայց առաւօտուն աւելի յարմար է (1) :

(1) Տղայք աւազան մտցնելու բարի սովորութիւնն ընդհանրացնելով հարկ չը մնար թրքական ոճով բաղանիք տանիլ նորածին մանկունքն : Այս բաղանիքները բոլորովին արգիլեալ լինելու են, ոչ միայն առաջին և երկրորդ մանկութեան ժամանակ, այլ և աւելի երկար ատեն : Արեւելքի բաղանիքները տղայք մտցնելն, եւ շատ շատ ամենածանր հիւանդութիւններ յառաջ կը բերէ, և նոցա ըրած զոհերը անթիւ են : Գրեթեմային ջերմութիւն, վնասիչ շոգիներ, մերթ եւս գարշահատ բուրմունք, աճ ու սոսկում, ճիչ և զայրոյթ երկարատեւ, սուքս են ահա նորածինին այն բաղանից մէջ վայելածն, որք, կարծեմք, պէտք եղածէն աւելի կը բաւեն շար հետեւանքներ պատճառելու համար, առանց որ և է կարեւոր պիտոյից կամ շահու :

Նորածինի մը գլուխը մասնաւոր խնամոց կը կարօտի: Նախ ընդհանրութեան այն նախապաշարման դէմ եւք որ կը կարծէ թէ տղու մը գլուխն երբէք մաքրելու չէ: Առողջ ժամանակը նորա գլուխը թխագոյն արտաթորում մը ունի, սեւուկ կեղտ մը, որ եթէ չը հանուի, քիչ ատենէն բաւական կ'ստուարանայ: Պէտք է ամեն օր վրձինով մը եւ գաղջ ջուրով այդ կեղտը հանել:

Գլխուն հերաւոր մորթին վրայ շատ անգամ այլ եւ այլ վէրքեր դուրս կը գան, որք քիչ կամ շատ ատեն կը տեւեն եւ որոց կաթի կեղեւանք, գտակ, կարմիր գտակ անուաները կուտան (ռամկ. Խ-Ֆէ-): Սոքա ամենքը դատ դատ հիւանդութիւններ են եւ մեծ սխալանք մըն է կարծել թէ այդ հիւանդութեանց պէտք չէ դպիլ: Եթէ այդպէս անխնամ թողուին, քիչ ատենէն ոջիլներ կը գոյանան եւ կեղեւներուն ներքեւ փոքրիկ վէրքեր կամ փոքրիկ խղիայթներ (abcès, շէպան) կ'ելնեն, որոց հետեւութիւնը խիստ ծանր կրնայ լինիլ: Ուստի փոխանակ կարծելու թէ կեղեւներն, ոջիլներն եւայլն, տղուն առողջութեանն որ եւ իցէ կերպով նպաստաւոր են, պէտք է, երբոր կը գոյանան, անմիջապէս խնամուին որ անհետանան:

Նոյնպէս է նաեւ երբեմն ականջէն եկած հոտումներուն համար: Ո՛րքան խուլ եւ համրեր կան որք ուրիշ պատճառէ չեն եղած, եւ քանիցս անգամ այդ հոտումէն մեննիտայ (meningite) եւ մահ առաջ եկած է:

Պէտք է ուժգնապէս ընդգիմանալ զանազան երկիրներու մէջ գտնուած մէկ սովորութեանն, ուր ուղելով տղուն զանկին մասնաւոր ձեւ մը տալ՝ կը սեղմեն զայն թէ ձեռքով եւ թէ կապիչով մը:

Այս եւ սոցա նման սովորութիւնները բարեբաղդաբար օր ըստ օրէ կ'անհետանան, քանզի խիստ ցա-

ւալի հետեւանքներ կրնան պատճառել թէ ուղեղին աճման եւ թէ խելքի մասին (1):

ՏՂԱՅՔ ՊԱՌԿԵՑՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆ

Կենաց առջի ամիսները տղայ մը կը դիէ եւ կը նընջէ: Պէտք է ուրեմն մեծ խնամք տարուի որ նորա քունը լաւ հանգամանքներու մէջ կատարի:

Օրօրոցը տեսակ տեսակ ձեւեր կրնայ ունենալ, բայց նորա առաջին պայմանն այն է որ ծակոտեալ պէտք է լինի: Ուռիէ (osier) կամ փայտէ բարակ գաւազաններով կամ ցանցի նման փորանկեալ երկաթնէրը լաւագոյն են: Երբէք օրօրոցներն ամեն կողմէ գոց պէտք չէ լինին սնտուկի նման, զի այն ատեն գարշահոտութիւնը շուտով նոցա մէջ կը թափանցեն, միջատները կը լեցուին եւ դժուարաւ կը մաքրուին:

Անկողին մը պէտք է բաղկանայ մէկ կամ երկու ներքեւակէ եւ մէկ բարձէ: Նոցա մէջ պէտք է լեցուին վարսակի փոճոկ (balle d'avoine, Է-Լ-Ֆ), ջրիմուռ (varech, Է-Յ-Կ), պտեր (fougère) եւայլն: Սոքա ստէպ նորոգուելու են: Երբէք անկողնոյ համար բուրդ, փետուր կամ բամպակ պէտք չէ դործածել, որք խո-

(1) Անասակար գործողութեանց կարգն է արեւելքի մէջ ծընդդէմն առջի օրերը տղայոց կուռը շառտելն (scarifier. հ-հ-Է) առանց բանաւոր պատճառի, վանդալական գործողութիւն որ, ի բաց առեալ յառաջ բերած վնասներն, անջինջ եւ տգեղ սպիներ կը ձգէ մարմնոյն վրայ: Մանկաբարձք, արեւն բորբոքում, մայրաւ, Կ-Կ-Կ եւ այլն անուաներով, անգոյ հիւանդութիւններ կը գտնեն տղուն վրայ շառտումն պահանջող, եւ կարծես մանկանց յատուկ եղած հիւանդութիւններն անբաւական գտնելով, իրենց անմտութեամբն, այդ հիւանդութեանց ցանկն ընդարձակել կը ջանան:

նաւութիւնն եւ մէզի հոտն ամփոփելով կը պահեն : Ներքեւակներուն եւ բարձին վրայ կտաւէ կամ բամպակէ սաւան մը պէտք է, եւ վրան թեթեւ բայց տաք պահող բուրդէ վերմակ մը (1) :

Երբէք պէտք չէ ներքեւակին վրայ անթափանձելի կտաւ մը դնել որ զայն պահպանէ, վասն զի այն առտեն տղուն ամեն կողմը խոնաւ կը մնայ, որ միշտ կը փնասէ :

Օրօրոցը պէտք է շարէ (mousseline) կամ թեթեւ լաթէ վարագոյրներով պատած լինի, որք գիւրու-թեամբ կարենան վեր առնուիլ :

Մայրը պէտք չէ երբէք իր անկողնոյն վարագոյրներով ծածկէ օրօրոցն, որպէս զի մանուկն արդէն ապականեալ օդ մը չը ծծէ : Պէտք չէ երբէք որ կաթ տալէն վերջը տղան իր անկողնոյն մէջը պահէ, զի մի գուցէ քունը տանի եւ խեղդէ զայն : Օրօրոցը բնաւ դեմնի վրայ դրուած լինելու չէ, այլ գետնէն բաւական բարձր, որպէս զի մանուկը խոնաւութիւն չ'առնու :

Նորածինը պէտք է փոքր ինչ մէկ կողմ դարձած պառկի եւ այնպիսի դիրքով մը, որ երբ աչքերովն լոյսը փնտռէ, շիլ չը նայի :

Պէտք է որ մանուկն առանց օրօրուելու քնանայ, վասն զի օրօրելն ոչ միայն վատթար մէթոս մըն է ճիշը լռեցնելու համար, այլ եւ նորա մարտողութիւնը կը

(1) Ինչպէս վերը յիշուեցաւ թէ տղուն զգեստները պէտք չէ բնաւ նեղ լինին, նոյնպէս պէտք է ստիպեմք մայրերն որ օրօրոցին մէջ կապանքներով չը կաշկանդեն զայն բնաւ, որպէս զի նորա շնչառութիւնը չը դժուարի և թոքերը չը փսայիս : Եթէ օրօրոցն այնպէս մը պատրաստուած է որ երկու կողմէն իյնալու վտանգ չըկայ, ամեն կապ անօգուտ է, և ծուռ է բոլորովին այն կարծիքը, թէ առանց կապի մանուկը չը քնանար :

խանգարէ, խեղքը կը թմբրեցունէ եւ այս յոռի սովորութեան, մի ժամանակ վերջը, գերի կ'ընէ զայն խոնամողներն (1) :

Ինչպէս կենաց ամեն պիտոյք, քունն ալ սովորութեան օրինաց կը հնազանդի, անոր համար պէտք է զայն կանխապէս լաւ մը կարգի դնել (2) :

Պէտք է մանուկը սովորի իր օրօրոցին մէջ ննջել եւ ոչ մօրը ծունկերուն վրայ : Սովորելու է նաեւ տանը չափաւոր աղմուկին մէջ եւ լոյս տեղ քնանալ : Քանի մնծնայ ցերեկի քունը պէտք է նուազցնել, այլ երբէք գիշերուանը :

ԳԼՈՒԽ Է.

ԲՆԱԿՈՒԹԻՒՆ

Մանուկը ծնաւ . . . շունչ կ'առնու : Իր գոյութեան անհրաժեշտ եւ նախնազոյն այս պաշտօնն, այն որ իր կենաց յետին վայրկեանը միայն պիտի դադարի, շնչառութիւնն է, այսինքն իր թոքերուն մէջ անդադար նոր օդ մտնելն : Կրնայ ուրեմն մակարեքուիլ թէ սր աստիճան կարեւոր է նորա շնչած օդին մաք-

(1) Գողգիսկան դրութեամբ օրօրոցներով անհնար է ուժգին օրօրել, բայց թուրքի սճով օրօրոցները կը թողուն զմանուկն անինայ երեքցունել : Այն պատճառաւ սորա առջիններէն աւելի փնասաւոր ծանչցուած են :

(2) Տղւոց քունին առթիւ կրկին և կրկին կ'ողուշացնեմք զծնողս բնաւ չտալ աննց որ և իցէ թմբրեցուցիչ դեղեր, ինչպէս են մեկնի շարաբն, ափիսի գինին (laudanum), Բէր-Է եւ այլն, որքան փոքր քանակութեամբ որ լինին : Կամանապէս երբէք թոյլ տալու չէ որ դայեակը բերանն օղիով թրջելն յետոյ մօտենայ տղուն երեսին և շունջը անոր տայ որ թմբրի :

րութիւնն: Եթէ օդն անարատ է եւ եթէ յառաջագոյն նշանակուած ուրիշ հանդամանքներն եւս կէտ առ կէտ կը կատարին, այն ժամանակ մանուկն ըստ ըղձանաց կը զարգանայ, եւ երանգաւոր, մեղոյշ էակ մը կը լինի: Սորա հակառակն, երբ օդը վատթար, անբաւական եւ ֆլասակար արտաբերմամբք պակասեալ է, մանուկը տգոյն, թառամեալ եւ վատառօյժ կը լինի:

Եւծ քաղաքներու մէջ տղայք, ընտանիքին մօտն, իրենց պէտք եղածին չափ օդ չեն վայելիր ամենեւին, այն օդն որ նոցա սննդեան եւ կենաց կէտն է:

Ընդհակառակն, արուարձաններու եւ գիւղերու մէջ, օդին քանակութիւնը չէ որ կը պակսի, այլ շատ անգամ նա, մաքրութեան մասին, անբաւական է:

Վերջապէս, այս երկու պարագայից մէջ միանգամայն, բնակութիւնը կրնայ անյարմար դիրք մը ունենալ, ցուրտ լինիլ կամ արեգական ճառագայթները բնաւ չառնուլ: Լաւ պէտք է զիտնալ որ բնակութեան անյարմար դիրքէն է որ տղայք, մեծ մասամբ, հիւանդութիւններ կ'ստանան եւ ի խանձարուրէ կը թառամին:

Զգուշանալ պէտք է որ տղուն պառկած սենեակը ծառերու կամ բարձր տուներու շուքին մէջ չը գրտնուի, որք ոչ միայն արեգական կենսատու լոյսը կը խափանեն, այլ նաեւ օդին ազատ շրջելուն արգելք կը լինին:

Տղու մը առողջութիւնը մասնաւոր փոյթ եւ խընամբ կը պահանջէ: Պէտք է ուրեմն սանն ամենէն մեծ սենեակը նորա յատկացնել, այն որ առաւել մուտքեր ունի եւ ուր արեգական լոյսը կը մանէ յորդառատ: Այս սենեակին բոլոր տախտակամածները պէտք է օճառով լուանալ, պատերը կիրով բուել (cebrir) . եթէ չեն կարող զանոնք ներկել եւ ոչ օ-

թոցով ծածկել: Պէտք է նաեւ դուրս հանել անտի բոլոր հոտի եւ խափանիչ կարասները: Կարասիք որքան եւ քիչ լինին մէկ սենեակի մէջ, դարձեալ բաւական են ծնելու տղուն համար, բայց օդն, որքան առատ լինի, այնքան նորա պիտանի է:

Ծխնելոյղներն ամառ ատեն գոցուելու չեն բնաւ: Սոքա կատարեալ օդափոխ գործիներն են որոց պաշտօնն եւ պիտանութիւնը աներկբայելի են:

Վերջապէս այս մաքուր, օդաւէտ եւ արեգական զիւրամատչելի սենեակին մէջ, ամենէն յարմար տեղն յատկացունելու է օրօրոցին համար:

Նորա պէտք է տրուի պատուաստելին, քանդի նա պիտի լինի այնուհետեւ ընտանիքին հրճուանաց, աւկընկալութեանց եւ ցաւոց կեդրոնն:

Երբ ծնողք կարողութիւն ունին, լաւ կ'ընեն եթէ, տղուն օրօրոցին ներքեւ պահարկէն (filet parachute) մը դնեն, որ մանկիւր շատ վտանգներէ կրնայ զերծ պահել:

ՕԳ

Պէտք է ամեն օր տղուն պառկած սենեակին պատուհանները բանալ, որպէս զի նորա արդէն շնչած օդը նորոգի:

Երբէք վախնալու չէ առատ օդ տալէ: Զգուշութեամբ նորոգուած օդը ֆլասաւոր չէ, այլ օդին հոսանքներն են ֆլասաւոր եւ երկնչելի: Արդ՝ որ եւ է բնակարանի մէջ, եւ որքան նա տարածութիւն ունենայ, միշտ կարելի է օրօրոցն այնպիսի տեղ մը դնել որ օդի հոսանքներէն պատսպարեալ լինի:

Սակայն, օդ տալու պատճառանքով, պէտք չէ, խոհեմութեան հակառակ, չափն անցունել: Զոր օրինակ

անճրեւ կամ ձիւն եկած օրերը կամ սաստիկ քամի փչած ատեն, սենեակը պէտք է դոյ մնայ եւ կամ օդը նորոգուած միջոցին, եթէ կաւելի է, մանուկն ուրիշ սենեակ մը հարկ է փոխադրուի, գոնէ մէկ ժամուշտի:

Նմանապէս անխոհեմութիւն է պատուհանները բանալ առաւօտուն շաբա կռնուի կամ երեկոյին շաբա քաշ:

Սենեակը, նա մանաւանդ երբ փոքր է, միշտ դարձահոտութիւն մը ունի իր մէջ ամփոփուած, զոր կարելու է դուրս վանել (1): Ըսել է թէ լաւ մը օդը նորոգելը բաւական չէ, պէտք է նաեւ որ տղուն արտաքսումներով թրջուած կամ աղտոտած լաթերն եւս նոյն սենեակին մէջ չը մնան: Նոյն պատճառին համար կարիքին ծառայած ամաններն իսկ միշտ մաքուր պէտք է պահուին:

Տղուն սենեակին մէջ պէտք չէ ընաւ ծաղիկ, հոտաւոր նիւթեր, վառարան («սպ»), կերակուրի եփոց եւ այլն գանձուին (2): Գիշերն որքան կարելի է քարա-

(1) Մանկան պառկած սենեակին մէջ չափահասները բազմութեամբ պէտք չէ հաւորուին, վասն զի ոչ միայն նորա շնչելու օդին մասնակցելով՝ զայն շուտով կ'ապականեն, այլ և աղմուկէն նորա քունը կը խանգարի: Հարկ է նաեւ յիշել սասթէ ո՛րքան վնասակար է, նորածինին գանձուած սենեակը, ծխելու անշաճ սովորութիւնը:

(2) Մեր երկրին մէջ ձմեռ ատեն նախնական սովորութիւն մը կայ կրակարանով (խոյն) սենեակները տաքցուենել: Այս սովոր, անպիտան և անկատար գործին որ ամենուս հաւասարապէս կը վնասէ, պէտք չէ նա մանաւանդ նորածինի մը զրտնուած սենեակը մտնէ: Ածխային թթուութիւնը (oxyde de carbone) անտի աննշան քանակութեամբ բոցելով կարելի է չափահասից չը վնասէ դիւրաւ, բայց նոյն փոքր քանակութիւնը, փափուկ արարածի մը համար, մեծ անհանգստութեանց և մահու իսկ պատճառ կրնայ լինիլ, ինչպէս տեսնուած են շատ օրինակներ:

իւղի (petroleum) կանթեղ պէտք չէ վառել, որ օդը կ'ապականէ ժանտահոտ բուրմամբ, եւ տղուն ծծելու օդին մեծագոյն մասը, նորա 'ի վնաս, սպառելով:

Հասարակ ձէթով խիստ փոքրիկ կանթեղ մը, լաւ կարուած մէկ պատրոյկով, կամ լաւ եւս պարզ գիշերային կանթեղ մը, լիովին բաւական են:

ԼՈՅՍ

Ոսկեփայլ արեւուն գեղեցիկ լոյսը նորածինին անհրաժեշտ է: Մութ սենեակի մը մէջ կամ միշտ շուքանդ, մանկիկը կը թօշնի եւ կը վատի (1):

Տեսէք այն խեղճուկ փոքրիկ արարածներն, որք չարունակ մութ ու թանձր օդի մը մէջ ընկղմած են, սրբան գունաթափ եւ խարշամեալ է երեսնին եւ սրպիսի հակապատկեր են այն թարմերես ու վարդերանդ մանուկներուն, որք ազատ օդի եւ ճոխ լոյսի մէջ կը բողբոջին: Պէտք չէ սակայն հակառակ ծայրայեղութեան մէջ իյնիլ, վասն զի մատղաշ տղու մը աչերն իսկ փափուկ գործարաններ են, որոց զիւրադպացութիւնը պէտք է խնայութեամբ գործածել: Խիստ պայծառ լոյս մը, եթէ մէկէն 'ի մէկ վրան զարնէ, կրնայ ուղեղի կողմէն պատահարներու պատճառ լինիլ եւ կամ որեւէ մասին քիչ կամ չատ խանգարումն յառաջ բերել:

Պէտք է ուրեմն զգուշանալ որ արեւուն ճառագայթներն, հայելիէ մը կամ փայլուն կարասիէ մը անդրէն ցողանալով, նորա աչքին չը զարնեն եւ չը վնասեն, եւ կամ լոյսը վանդակներու մէջ տեղերէն կամ փեղկերու ծակերէն ուղղակի աչքին վրայ չիյնի, զի

(1) «Որ տեղ արեւ չը մտնէր, բժիշկն ստեղ կը մտնէ» կրնէ խալացի առածը:

այսպէսով ոչ միայն տղան շիւ նայիլ կը սովորի, այլ եւ ապագային մէջ տեսութիւնը կրնայ վնասուած մնալ :

ԱՍՏԻՃԱՆ ՁԵՐՄՈՒԹԵԱՆ

Նորածին մը աւելի տաք քան թէ պաղ օդի կը կարօտի, նա մանաւանդ իր կենաց առջի ամիսներն :

Նորա սենեակին մէջ ջերմաչափ մը պէտք է դրուի : Այս դիւրագին գործին որ ստոյգ տեղեկութիւններ կը տայ, ընտանիքի մը կարասեաց մէկ պիտանի մասը պէտք է կազմէ :

Ջերմաչափը ճշգիւ իմաց կը տայ մօրը կամ ստընտուին թէ սենեակին օդն ըստ բաւականի տաք է, եւ ասով չափազանց ջերմութենէն կ'ղգուչանայ :

Ջերմաչափը պէտք չէ որ 12 աստիճանէն պակաս ցոյց տայ, եւ ոչ 18 աստիճանէն աւելի : Միջակ ջերմութիւնն 15 կամ 16 աստիճան հարիւրաչափ պէտք է լինի ձմեռ ատեն :

Իսկ ամառն օդին նորոգումը բաւ է ջերմութեան սաստկութիւնը մեղմացնելու եւ անտի յառաջ եկած անպատեհութիւնները բառնալու համար :

Տղան չը մրսեցնելու պատրուակաւ, երբեմն նորա անկողնոյն վրայ գորգեր եւ վերմակներ կը դիզեն : Իսկ երբ դուրս հանեն զայն, եւս առաւել վրան կը ծածկեն եւ բազում հագուստներ, մուշտակներ եւ կնգուղներ վնասիչ առատութեամբ կը հագցունեն : Պէտք չէ անշուշտ որ խեղճ մանկիկը մրսի, բայց պէտք չէ նաեւ որ խեղդուի :

Հարկ է ուրեմն որ չափաւորութեամբ ծածկուի եւ թոյլ տրուի որ իր փոքրիկ երեսին դուրսի օդը զարնէ, քանի որ երեսը քաղցով մը ծածկուած է : Այս բանն ոչ իր առողջութեանն եւ ոչ քաջառողջութեանը վնաս կը բերէ :

ՁԱՅՆ

Նորածինի մը լսողութիւնը մասնաւոր զգուշապահութիւններ կը պահանջէ : Այս գործարանն անմիջական յարաբերութիւն ունի ուղեղին հետ, որ մեծ հանդարտութիւն կ'ուզէ : Ուշիմ մայր մը կամ դայեակ մը միշտ կարող է տղուն ականջը սաստիկ եւ յաճախ աղմուկներէ պահպանել, ինչպէս են սուր եւ աղղու ձայներն (1) : Հարկ չէ այս կէտին վրայ առաւել պնդեմք : Բոլոր այս մանրամասն զգուշութիւններն որքան որ ջնջին երեւան, իրենց կարեւորութիւնն ունին :

ԳԼՈՒԽ Ը .

ԴՈՒՐՍ ԵՆՆԵԼ ՄԱՐՄԵԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ,

ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆՔ

Տղայք խիստ մաքուր եւ խիստ օդաւէտ բնակարաններու մէջ պահելը, մեծ բան է անշուշտ, բայց ոչ բաւական : Պէտք է նաեւ որ նոցա մարմնավարժութիւն ընել տան եւ դուրս հանեն, ամեն ատեն որ օդը կը ներէ :

Գիեցիկի մը մարմնավարժութիւնը լոկ ձեռքերուն եւ ոտքերուն շարժում տալէն կը բաղկանայ : Երբոր կը լուան կամ զգեստները կը փոխեն, պէտք է, մերկ ու արձակ թողուն զայն քիչ մը ժամանակ վառարանին

(1) Շատ անգամ տղուն աղաղակները դադրեցնելու համար, մայրերը սովորութիւն ունին քան զայն բարձրաձայն, միակերպ եւ անխորժ եղանակաւ, նորա ականջին մօտը պուսլ : Փոխանակ այսպէս նորա լսողութիւնը վնասելու, լաւագոյն է քննել եւ իմանալ նորա ճշկուն պատճառն եւ կատարել այն բանն որու կը կարօտի :

մօտ եւ դայեակին ծոնկերուն վրայ: Այն միջոցին նա ազատօրէն իր ոտքերն ու թեւերը կը ձգտէ ու կը շարժէ:

Չմեռ ատեն սպասելու է որ մանուկը դոնէ տասն եւ հինգ օրուան լինի եւ ապա դոնէն դուրս հանելու է առաջին անգամ, երեսին վրայ քօղ մը ձգուած: Իսկ ամառն, ութ օր սպասելը բաւական է: Գուրս հանելու սկզբնաւորութիւն չըրած, պէտք է, տակաւ առ տակաւ վարժեցունել զայն դուրսի օդին եւ լոյսին, երբեմն բաց պատուհանի մը առջեւ կացուներով (1):

Մի անգամ որ մանկիկը դուրս ելնել կ'սկսի, պէտք է ամեն օր երկու կամ երեք ժամ դուրսը մնայ ըստ օդին եւ եղանակին: Գայեակը պէտք է զայն հորիզոնական դիրքով գիրկին վրայ պառկած բռնէ, կամ լաւ եւս բարձի մը վրայ: Երբոր նա բաւական կ'ուժաւորի, այն է մէկ կամ մէկ ու կէս ամսու եղած ատեն, բարձը մէկ կողմ ձգելու է եւ գիրկի վրայ բռնելու է երբեմն մէկ կողմ եւ երբեմն միւս կողմ դարձուցած:

Այս կարեւոր կանոնին մոռացումը պատճառ կը լինի որ շատ անգամ մանկանց սրունքներէն եւ երանքներէն մին կամ միւսն, եւ երբեմն իսկ ողնայարը, ծըռած կը մնան:

Գալով տղայոց յատկացեալ փոքրիկ կառքերուն, նոցա գործածութիւնն երբեմն ստիպողական է եւ այս մասին հարկ չէ պնդեմք երկարօրէն: Սոքա ամառը բնաւ անպատեհութիւն մը չունին, բայց կը խրատեմք որ ձմեռ ատեն լոկ ճանրայ գնալու գործածութի, տունէն մինչեւ սանտուխն սովորաբար գտնուած վայրն:

(1) Արեգական ճառագայթներէն պէտք չէ մանկիկն այնքան զգուշանալ որչափ որ սովորութիւն է ընել: Եթէ մեղմ է արեւը, կենսատու է նորա մարմնոյն, ինչպէս որդեօջող ծագկանց:

Այն տեղ հասնելէն վերջը, սանտուն պէտք է իր կաթնասունը գիրկն առնու եւ երբէք որ եւ է պատճառանքով, տունէն բացակայ գտնուած մէկ քանի ժամերն, կառքին մէջ չը պահէ զայն. քանզի այն տեղ անշարժ մնալով, մանկիկն որքան որ տաք պահող զգեստներ հագած լինի եւ ոտքին ներքեւն իսկ գոց ամանով տաք ջուր ունենայ, դարձեալ հարբուղիս, հազ եւայլն ստանալու վտանգէն գերծ չէ:

Մանուկն երբ նստիլ կ'սկսի, ըսել է եօթերորդ կամ ութերորդ ամսոց մէջ, վար դնելու է զայն գորգի մը կամ փսիաթի մը վրայ, չորս կողմը բարձեր շարուած, եւ նորա փոքր խաղալիքներ տալու է: Այս խաղալիքները պէտք չէ որ ներհարս լինին: Նա մէկ խաղալիքէն միւսը կը քաշքշուի եւ տակաւ առ տակաւ կը յաջողի ոտքի ելնել եւ քայլել: Բայց բնաւ երբէք ժամանակէն առաջ պէտք չէ քայլեցնել զայն: Մանուկ մը որ ութն կամ ինն ամսու մինակ կը քայլէ, շատ տեսակ տձեւութիւններու կ'ենթարկի: Այն վայրկեանէն որ կ'աշխատի ուղեւորիլ, պէտք է վառարաններուն, պատուհաններուն եւ սանդուղքներուն առջեւ պատուարներ դնել, որպէս զի, իր անփորձառութեամբը, վտանգներու չը պատահի: Կնկած ատեն չը վնասուելու համար, մասնաւոր գլխարկներ կան բամբակէ գլանով մը շրջապատեալ, որոց գործածութիւնը կրնայ օգտակար լինիլ:

Իսկ այն կողմներն եւ անուաւոր գործիներն որք զմանուկն անութիւններուն ներքեւէն կը բռնեն որ կարենայ ոտքին վրայ յենուլ, բնաւ գործածուելու չեն, վասն զի տակաւին տղուն ոտքերն իր մարմնը կրելու չափ ոյժ չեն ստացած: Լաւ եւս է պարզապէս թեւերէն կամ անութիւններուն մօտէն կամ շրջազգեստէն ձեռքերով բռնել զայն որ քայլէ:

Բայց դիտարկելու զգուշանալու է մէկ թեւէն միայն բռնելով զայն վերցունելէ, ջրի մը վրայէ ցայտել տալու համար, սանդուղքէ մը վեր կամ փողոցին բարձր մայթերուն վրայ հանելու համար: Կարելի է այսպէս ընելով ուսը կամ դաստակը տեղէն եղնէ:

Վերջապէս այս եւս յաւելցունեմք, որ գիշերուան կամ խիստ աւեր օդին շրջագայութիւնք, կառքով կամ երկաթուղիով երկար ճանապարհորդութիւնք, որքան մանուկը դեռահասակ լինի, այնքան վասնդաւոր են: Սաստիկ ցուրտը, քամին, փոշին եւ ուժգին ցնցումներն, ամենքը զատ զատ եւ բազմաթիւ պատահարներու պատճառներ են:

ԳԼՈՒԽ Թ.

ՊԱՏՈՒԱՍՏ

Մազիկ անուն սոսկալի հիւանդութեան միմիայն նախապահեստը Պատուաստը է:

Պատուաստը ծնունդ կ'անու կովերու ստինքին վրայ դուրս աուող թեթեւ մէկ հիւանդութենէ, որ կը բաղկանայ փուշտակներէ (pustule): Այս փուշտակներուն մէջ կը գտնուի պատուաստի ժահրն (virus-vaccin, cow-pox, կով-ձաղէկ), որ մարդու վրայ կրնայ փոխադրուիլ, սորա մորթին վրայ թեթեւ խայթուած մը ընելով:

Կովին պատուաստական ժահրն այսպէսով մարդու վրայ փոխադրուելէն զկնի, մարդկային պատուաստ կոչուածը կը գոյանայ: Այս վերջինն է որ սովորաբար կը գործածեն:

Պատուաստին բարեքներն այնքան յստնապէս հաստատուած են, որ Անգլիոյ, Աւստրիոյ եւ Շուեարի մէջ տղայոց պատուաստիլը պարտաւորիչ է: Առ այժմ

Գաղղիոյ մէջ միմիայն ձրիապէս պատուաստելու տեղեր հաստատուած են:

Պատուաստի գործողութիւնն այնքան դիւրին է եւ անվնաս որ երբեմն քնացած մանկան մը վրայ կրնայ կատարիլ առանց զայն արթնցնելու: Այս գործողութիւնը կատարելու համար պատուաստական փուշտակներուն մէջ գտնուած հեղուկէն քիչ մը կ'անուն եւ տղուն վերնամորթին (épiderme) ներքեւ կը մտցնեն: Բայց որովհետեւ պէտք է որ այդ փուշտակին ընտիր տեսակն որոշուի, այն պատճառաւ այդ պաշտօնը բժշկաց թողելու է, որք միայն հմուտ են այս մասին:

Պատուաստի գործողութենէն հինգ օր վերջը, փոքրիկ շիտ մը (bouton) երեւան կը գայ, որ եօթներորդ կամ ութերորդ օրն իր կատարելութիւնը կ'ստանայ եւ տամներկուերորդ օրը կ'սկսի չորնալ ու վրան կեղեւ մը կապել: Այս կեղեւն երեք կամ չորս շաբաթ վերջը կ'իջնի ու անոր տեղ կը մնայ անհարթ եւ անջինջ սպի մը որ իրեն յատուկ երեւոյթն ունի: Շիտին հասնելու ժամանակը, տղուն վրայ թեթեւ ջերմութիւն մը կը գայ որ մինչեւ տամներորդ օրը կ'աւելնայ:

Սովորական պարագայներու մէջ մասնաւոր խնամք չըկայ տանելու, բաւական է միայն պատուաստի վերքերը չփամանց դէմ պաշտպանել որ չը բորբոքին: Ինչներորդ օրուան միջոցներն եթէ ցաւն ու կարմրութիւնը վախ կը տան որ թեւը սաստիկ բորբոքի, այն ատեն գետնախնձորի կամ բրինձի ալիւրէ խիւս մը վրան դնելու է: Եթէ անութներուն կծիկներն (ganglions) քիչ մը ուռին եւ կամ թեւն երերցուցած ատեն տղան ցաւ զգայ, պէտք չէ հոգ ընել:

Եթէ այս փոքրիկ պատահարներն անցունելու համար դարման մը ընել հարկ լինի, ութերորդ օրը բժշկը պէտք է զայն սնորինէ, վասն զի նոյն օրը նա

կը գայ շխտէրը քննելու եւ ստուգելու համար թէ պատուաստը հարաբան տեսակէն է, թէ «...» է: Տղուն պատուաստելու օրէն մինչեւ եօթեւորորդ օրն, անոր ոչ մէկ սովորութիւններն եւ ոչ ուտելիքները փոփոխելու է: Եօթերորդ օրէն վերջը զգուշանալու է ցուրտ տեղ զայն պարտցունելէ, վասն զի այն միջոցին է որ վրան ջերմութիւն մը կը գայ, թէպէտ խիստ կարճատեւ:

Տղայ մը պատուաստելու ամենէն լաւ ժամանակն երկրորդէն չորրորդ ամիսն է, այսինքն երբ բաւականապէս առօրեութիւն ստացած է եւ տակաւին ատամնաւորութեան անհանգստութիւնները չեն սկսած: Սակայն այս մեր որոշած ժամանակէն ամիս մը առաջ կամ ետքը կրնայ նաեւ պատուաստուիլ, որպէս զի ձմեռուան եւ ամառուան ամենէն սաստիկ եղանակներուն չը հանդիպի: Բայց լաւ համոզուած լինելու է որ պատուաստումը ամեն եղանակի մէջ կարելի է ընել (1):

Երբ ծաղկի հիւանդութիւնը քիչ կամ չատ տարածուած է մի տեղ, պէտք է փութալ տղուն ծնելուն առջի ութ օրուան մէջ պատուաստել զայն (2):

(1) Արեւելքի մէջ երբ հաստատեալ օրէնք մը կը քարոզեն եւ կը պնդեն թէ տղայք պատուաստելու չէ երբ ձառերը կ'ըսկըն շաւիլ Այս երկու իրաց մէջ անուան պատահական նրմանութենէն զատ ուրիշ յարաբերութիւն մը չը կայ անտարակոյս, և այս կարծիքին որքան անճոռնի լինելն հարկ չէ յայտ առնուիք: Այս նախապաշարումն արգելք է, մանաւանդ, որ տարուան յարմարագոյն եղանակէն օդուտ չեն քաղեր ծրնողք, իրենց մանկուէքը պատուաստելու համար:

(2) Եթէ ստիպողական պարագայ մը կայ տղայք պատուաստելու համար, անտարակոյս քաղքի կամ թաղի մը մէջ ծաղիկի հիւանդութիւնը ճարակուած ժամանակն է: Մինչեւ անգամ եթէ տանը մէջ մէկը ծաղիկ հանած լինի, փութալու է մանկիկը պատուաստել, եթէ զայն տունէն հեռացնելու հնարը

կոլու պատուաստ գտնելը շատ անգամ դժուար լինելով, քաջառողջ տղու մը թեւէն առնուած պատուաստը կը գործածեն սովորաբար, եւ այս բանը նոյն իսկ պատուաստակիր տղուն օգտակար է, վասն զի, նորա շխտը պարպուելով, բազկին բորբոքումն եւս կը նուազի եւ պատուաստին զօրութիւնն անով՝ բնաւ չը պակսիր (1):

չկայ: Պատուաստին գործարարը բնաւ մանուկը ծաղիկ չը հաներ, եթէ այն վայրկեանէն առաջ ծաղիկէն փոխուած չէ: Պատուաստը ծաղիկ հանելու ընդհանուր շարք երբեք, և փոխուած իսկ եթէ լինի, պատուաստը կը թեթեւցնէ հանելու ծաղիկն: Ծնողաց համոզումը ճիշդ սորա հակառակն է, 'ի վրնա իրենց որդւոց:

(1) Եթէ պատուաստը գոհացուցիչ կերպով բռնած է, այն օրէն տղուն մարմինն անով տոգորեալ է, ըսել է որ շխտն մէջ գտնուած հեղուկն, որ քիչ օրէն չորնալով կեղեւ պիտի կազմէ, այլ եւս բոլորովին անօդուտ է իրեն: Այս բանէն կը հետեւի որ ծնողք այն հեղուկը պատուաստողին մերժելով, ոչ միայն անտեղի զգուշութիւն մը կ'ընեն այլ և, պարտաւելի անձնասիրութեամբ, արգելք կը լինին այս փրկարար գործողութեան դիւրաւ և անխտիր տարածուելուն:

ԳԼՈՒԽ Ժ.

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Աստ կ'աւարտի մեր պաշտօնն : Աստ կ'սկսին մայրերուն պարտականութիւններն :

Նոցա ըսինք մեք ինչ որ պէտք է ընեն , պատշաճաւոր կերպով իրենց մանկուները տածելու համար : Իրենց կը մնայ այժմ մեր գծած կանոններն ըմբռնել եւ 'ի դործ գնել :

Նոցա սրտամաշ վաստակոց փոխարէն , քաղցր վարձատրութիւն մը կ'սպասէ զիրենք : Իրենց զաւակը պիտի մեծնայ կորովի եւ կայտառ : Քսան տարիէն ետեւ վստահութեամբ եւ պարծանքով պիտի յենուն իրենց որդւոյն թեւին վրայ , երբ զայն մանկութենէ մինչեւ 'ի չափահասութիւն հասցունեն :

Եթէ իրենց զաւակն աղջիկ մի է , զայն եւս բարեբաստ կատարելութեամբք զարգացուցած պիտի լինին , երբ նա գեղատեսիլ մանկամարդ կ'ին մը լինի :

Այսպէսով մայրերն արժանացած պիտի լինին այն նուիրական պաշտօնին որ Աստուած յանձնած է իրենց , թոյլ տալով որ մայրութեան խնդութեանց եւ ցաւոց մասնակցին ժրպէս :

Ընկերութիւնն այսպիսի մայրերը պիտի արժանաւորապէս մեծարէ , քանզի պարտաւորութիւննին կատարած պիտի գտնուին :

Մարդկային ազգը պիտի օրհնէ զիրենք երախտագէտ սրտով :



7.

Արհ.

28

22 MAR 2013

4108

ՀՀ Ազգային գրադարան



NL0568345

